


521

ան Դաստիարակության Գլխ. Վարչություն  
Հայագիտական Կնոքուական Բյուրը



# ՊԱՏԵՆԻ

ԲԱԱԵՐՆԵՐԻ ԽՄԲԱԿ

ինչպես կազմակերպել խմբակը.....  
ինչպես կազմել բոշաբանական.....  
և կենդանաբանական հավաքածուներ

5 (077)

9 - 13

ՊԵՏՐԱՏ

1930

ՅԵՐԵՎԱՆ

S (022) up  
4-13

Հ. Ա. Խ. Հ. ԼՈՒՍՓՈՂԿՈՄԱՏ  
ԱՊՅԱՎԱԿԱՆ ԳԱՍՏԻԱՐԱԿԱՆՔՑԱՆ ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՑՈՒՆ  
ԳԱՎԱՐԱԳԻՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՈՒՐԴՐԱ

3.0 MAY 2005 20 MAY 2010

94(072)

7-16.

## Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

# ՊԱՏԱՆԻ ԲՆԱՍԵՐՆԵՐԻ ԽՄԲԱԿ

(ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ՑԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ)



## ՅԵՐԿՈՒԻ ԽՈՍՔ

Դրբուկս կազմված ե դպրոցականի, պատանի բնասերների և առհասարակ նրանց համար, ովքեր գավառագիտութեան խմբակի անդամ լինելով՝ ցանկանում են դիտել, ուսումնասիրել իրենց վայրի ու շրջապատի բնությունը։ Այդ գավառագետները չպիտի բավականան միայն դիտողություններով. անմիջապես պետք ե դրա հետ կապվի և գործնականը,—դիտել բնությունը, հավաքել նրա առարկաները—կենդանի կամ անկենդան, և կազմել կոլեկցիաներ (հավաքածուներ)։ Դրբի նպատակն ե ընդառաջել այդ պահանջին։

Այդ աշխատանքներն ավելի արդյունավետ կլինեն, յեթե կատարվեն վոչ թե անհատորեն, այլ կոլեկտիվ կերպով (փոքրիկ խմբակներով կամ ողակներով)։ Գրա համար անհրաժեշտ ե կազմակերպել պատանի բնասերների գավառագիտական խմբակ։ Խմբակը կղեկավարի բնասերի աշխատանքները, վորոն ավելի կազմակերպված բնությունա, և նրա արդյունքներն ավելի մեծ կլինեն։

Թե ինչպես պիտի կազմակերպել խմբակը, —այդ մասին խոսվում ե գրքի առաջին մասում։ Առաջարկվում ե ձեռքից մեկը, վոր յերկար տարիների ընթացքում կիրառվել ե Հյուսիսային Կովկասի քաղաքներից մեկում։ Ի հարկի, կարելի լի լրիվ չհետեւել այդ ձերին և նրա մեջ վորոշ փոփոխություններ, լրացումներ մտցնել, —համաձայն տեղի պայմաններին ու հարավորություններին։ Հիմնականը—խմբակ կազմակերպեն և և այն ել անպայման աշխատունակ խմբակ։ Աշխատանքի ընթացքում, պայմանների համեմատ, անհրաժեշտ կազմակերպչական փոփոխությունները կկատարվեն։

Թվում ե, թե բերած անգամ վոչ լրիվ ցուցմունքներն ել բավագան կլինեն, վոր պատանի բնասերները կազմակերպեն գավառագիտական-բնագիտական խմբակ և անմիջապես գործի անցնեն։

Պատանի բնասերի հետախուզությունները մեկ-յերկու պատահագան եքսկուրսիաների, կարճ ժամանակվա աշխատանքներ չեն։ Հիտախուզությունները պետք ե անպայման փաստացի ապացուցներ ունենան, իսկ գրանք—բնության մեջ հավաքած առարկաներն են։ Ուրեմն

428  
49

Հ. 1296.

Գլառեպիւր № 5172 (բ.)

Տերած 4000.

Պետական առաջին տպարան Վաղարշապատում  
Պատվեր № 83.

անհրաժեշտ և հավաքածուներ (կոլեկցիաներ). իսկ դրա համար հարկավոր ե իմանալ, թե ինչպես վարվել: Հավաքածուներ կազմելը հիմնական նպատակը չե, հիմնականը՝ բնության ուսումնասիրելն ու հետախուզելն ե: Տարբեր տեսակի հավաքածուները (կենդանի և անկենդան աշխարհների) կցուցաբերեն բնասերների հետախուզության արդյունքները:

Կոլեկցիաներ կազմելու մասին խոսվում ե գրքի առաջին մասում, ուր արվում են սկզբնական մատչելի ցուցմունքներ՝ բուսաբանական և կենդանաբանական կոլեկցիաներ կազմելու վերաբերյալ: Դրքի սահմանափակ ծավալը թույլ չի տալիս ավելի մանրամասն կանք առնել այդ հարցերի վրա, ինչպես նաև նոր հարցերի մասին խոսել ինչպես, որինակ՝ հանքաբանական, խրովիլակ պատրաստելու, կենդանի անկյան և այլ հարցերի մասին: Դրքի նյութը—բնագիտական խմբակային աշխատանքներին նվիրված լրիվ աշխատության մի քանի խտացրած գլուխներն են:

Նոր հարցերի մասին կիսունք մի ուրիշ անգամ: Պատահի բնասերների խմբակն իր ուժերի չափ պետք ե մասնակցություն ցուցաբերի նաև գյուղատնտեսության կոլեկտիվացման աշխատանքներում: Կոլխոզներին ոգնելը, ոժանդակելը—նրա հարվածալին աշխատանքներից մեկը պետք ե լինի: Այդ հարցի մասին ևս վորոշ ցուցմունքներ տըրքած են:

Դրքի վերջում մատնանշված են—գրականության և բերված անձրաժեշտ պարագաների և նյութերի ցուցակներ:

Փորձի բովից անցած բնասերների բոլոր գիտողություններն ու առաջարկները սիրով կընդունվեն: Լրացուցիչ ցուցմունքների համար (գրականության մատնանշման, կազմակերպչական բնույթի) միշտ կարելի է գիմել հեղինակին Գավառագիտական կենտրոնութիւնի հասցելով:

Հեղինակ.

## 1

### ԿԱԶՄԱԿԵՐՊՉՈՒԿԱՆ ՄՅՈ

#### 1. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ-ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԱԿ

Գավառագիտական խմբակները տարբեր բնույթի կարող են լինել: Տվյալ վայրի, գավառի ուսումնասիրությունը պիտի կատարվի բազմակողմանի.—ուսումնասիրություն՝ բնույթան (բուսական, կենդանական աշխարհները, կլիմայական պայմանները), գյուղի, քաղաքի (բնակչությունը, կյանքի պայմաններն ու կենցաղը), արդյունաբերության, վայրի պատմական հնությունների և այլն. ահա գավառագիտական խմբակի բուն նպատակները:

Մենք կանգ կառնենք գավառագիտական ուսումնասիրությունների զուտ բնագիտական կողմի վրա, այսինքն բնույթյան՝ այն շրջապատի վրա, վոր այս կամ այն կերպ ազդում ե մեր կյանքի վրա:

Ամեն մի խմբակային աշխատանք դրական արդյունք կտա այն գեպքում, յերբ խմբակի շուրջը համախմբված լինեն գործին անկեղծ նվիրված, տվյալ խմբի նպատակներով տոգորված աշխատողներ:

Ամեն մի դպրոց անպայման պիտի ունենա գավառագիտական-բնագիտական խմբակ: Սակայն այդ խմբակն այնպես պետք ե կազմակերպվի, վոր բոլորի համար պարտադիր չլինի: Ում բնույթյունը չի հետաքրքրում, նրան զոռով ստիպել բնախուզական աշխատանքներ կատարել, իհարկե, չի կարելի:

Խոսելով բնագիտական խմբակի կազմակերպության և ծրագրի մասին, պետք ե դեկավարվենք այն սկզբունքներով,

վորոնք Հյուսիսային կովկասի խոշոր քաղաքներից մեկում առարող տասը տարվա գավառագիտական-բնագիտական խմբակային աշխատանքների հիմքն են կազմել: Թող այդ խմբակը վորոշ չափով որինակ ծառալի նման խմբակներին նաև մեզանում: Իհարկե, նայած տեղին ու պայմաններին, այս կամ այն անհրաժեշտ լրացումները պիտի արվեն:

Խմբակի կազմակերպության նախնական աշխատանքը հետևալն ե.—նաև և առաջ բնագիտության կամ աշխարհագրության դասատուն (յեթե վերջինս նաև բնագետ ե) դասարաններում խոսում ե այն մասին, թե հատկապես գավառագիտական-բնագիտական խմբակային աշխատանքներն ինչ նպատակներ ունեն:

Իհարկե, ավալ վայրի, գավառի բազմակողմանի ուսումնամիբության համար շատ խոշոր նշանակություն ունի հենց նույն վայրի բնության ուսումնամիբությունը: Բնությունը բոլորն ել կարող են ուսումնամիբել: հարկավոր ե միայն ցանկություն և լուրջ աշխատանք:

Խմբակային աշխատանքը կարող ե լինել դասարանային աշխատանքներից անկախ (իհարկե, այնուամենանիվ միմանց հետ կապված են ու իրար ոժանդակում են): Այսինքն՝ յեթե գպրոցականը դասարանում անցնում ե բուհակ կյանքը, կամ մարդու ֆիզիոնգիան և կամ թե անկենդան բնությունը,—այդ չի նշանակում, թե խմբակն ևս նույն բանով պիտի անպայման քըաղվի. իհարկե, կարող ե նույն նյութին վերաբերող հարցերով ել զբաղվել, բայց և կարող ե մի ուրիշ դասարանի նյութով ևս հետաքրքրվել:

Խմբակում—նյութի ընտրությունն ազատ ե. ամեն մի անդամ իր համար ընտրում ե բնության այն բնագավառը, վոր իրեն ավելի շատ ե մոտ և սիրելի. կան բուսասերներ (բույսերով սիրող-հետաքրքրվողներ), կենդանասեներ, կան և այն պիտիները, վորոնց ամենից շատ անկենդան բնությունն ե (ոգերեսութաբանություն, հանքեր, լեռնային տեսակներ) հետաքրքրում:

Կազմակերպչական նախնական ժողովում խմբակի ապագա ղեկավարն այդ ուղղությամբ ևս պետք ե խոսի: Խմբակին անդամ կգրվեն նրանք, ովքեր սիրում են բնությունը և հետաքրքրվում են գավառագիտական հարցերով: Խմբակում գրվելով՝ յուրաքանչյուրը կընտրի իր ձգտումներին համապատասխան բնագավառ և այդ ուղղությամբ կպարտավորվի վորեւե աշխատանք կատարել: Սակայն խմբակի անդամը ծարքահեղորեն չպիտի մասնագիտանա: իր ընտրած հարցին նույնպես բազմակողմանիորեն պիտի մոտենա:

Ապագա ղեկավարի զրուցից հետո մի քանի որ դեռ թող լավ մտածեն լսածի մասին. ապա հարցին մոտենան լրջմտուրեն, վորից հետո խմբակին անդամ կգրվի նա, ով հանձն կառնի իր վրա վերցրած պարտականությունները կատարել: Ցուցակագրվելուց հետո հրավիրել ընդհանուր ժողով, ուր նորից համառոտակի հիշեցնել յուրաքանչյուր բնասերի պարտականությունների մասին. մի գուցե վոմանք մտքները փոխած լինեն ու հրաժարվեն:

Սկզբում, իհարկե, շատ կգրվեն, սակայն կարիք չկա բազմամարդության յետեկո ընկնել. բազմամարդությունից գործը կաղում ե: Թող լինեն քիչ, բայց լինի իսկական բնասերների հաստատուն մի կորիզ:

Անհրաժեշտ ե ընտրել խմբակի բյուրո—կազմակերպչական և ղեկավար մի որգան: Խմբակի ընդհանուր գիտական ղեկավարը կլինի բնագիտության կամ աշխարհագրության (յեթե բնագետ ե) դասատուն: Բյուրովի կազմի մեջ կմտնեն՝ նախագահը, քարտուղարը, գանձապահը: Կազմի մեջ կարելի լին մտցնել նաև խմբագրական կոլեգիայի ղեկավարին և թանգարանի կամ կենդանի անկյան վարիչներին, յեթե այդպիսիք կան:

Ուրեմն հիմնական բյուրոն կազմված ե—գիտական ղեկավարից (դասատու), նախագահից, գանձապահից և քարտուղարից: Անհրաժեշտ ե ունենալ նաև առանձին խմբագրական կուլտիւ (3—5 անդամից բաղկացած): Վերջնիս կազմում պիտի լինեն—նկարիչ, լավ ձեռագիր ունեցող և լեզուն լավ իմա-

ցող: Խմբագրական աշխատանքներին կարելի է մասնակից առել և խմբակի ուրիշ պիտանի անդամներին:

Գիտական ղեկավարը—խմբակի աշխատանքներին կյանք ու թափ տվողն ե. նա բոլոր գիտական, գործնական ցուցմունքներ տվողն ե. նա տեղյակ, պատրաստի անդամ-ողնականների աջակցությամբ գործնական-հետախուզական գիտելիքներ ե տալիս և ղեկավարում ե այս կամ այն անդամի հետախուզական աշխատանքը:

Քարտուղարն արձանագրում ե այն բոլորը, ինչ վոր վերաբերում ե խմբակի կատարած աշխատանքներին, և կազմում ե ընդհանուր ժողովի արձանագրությունները:

Գանձապահը—անդամավճարներն ե հավաքում: Յեթե խըմբակը գպրոցից վոչ մի նյութական ոժանդակություն չի ստանում, կամ ստացածը շատ չնշին գումար ե, այդ դեպքում, վերոհիշյալ խմբակի որբնակով, խմբակի ընդհանուր ժողովը վորոշում ե գանձվող անդամավճարի չափը: Սահմանվում ե մինիմումը, —իհարկե, մատչելի մի գումար. իսկ ովքերը բոլորովին չեն կարող մուծել —ազատվում են. համենայն դեպս անդամավճար չմուծելը վոչ մի դեպքում չի կարող խմբակ մտնելուն խոչընդոտ հանդիսանալ:

Գանձգած գումարները ծախսվում են խմբակի ընդհանուր կարիքների վրա. ինչպես՝ եքսկուրսիոն պարագաների, թղթի, մատիտի, ներկերի և այլ անհրաժեշտ իրերի վրա:

Իհարկե, ամենից լավն այն կլինի, վոր խմբակը վորոշնյութական ոժանդակություն ստանա գպրոցից կամ մի այլ այնպիսի հիմնարկից, վորը անմիջորեն շահագրգոված ե գավառագիտական հարցերի լուսաբանությամբ. այդ դեպքում անդամավճարների հարցը կվերանա:

Խմբագրական կոլեգիալի աշխատանքը կլինի —պատի թերթի կամ ձեռագիր-տետր թերթի հրատարակությունը (կամ թեմիաժամանակ հենց յերկուսն ել), թերթերում կլինին բնասերների աշըի ընկնող դիտողությունները և միաժամանակ կլու-

սաբանվի խմբակի ընթացիկ կյանքը՝ նրա հետախուզական աշխատանքը:

Խմբագրական կոլեգիան հնարավորությունների սահմանաներում պիտի լուս ընծալինակ այնպիսի հրատարակություններ, վորոնք կհեշտացնեն խմբակի անդամների բոլոր տեսակի աշխատանքները. այդ արդեն կախված ե գիտական ղեկավարի պատրաստականությունից ու ձեռներեցությունից:

Տողերիս գրողի ղեկավարած խմբակը, բացի «Բնություն» թերթից (մինչև 30 եջ, տետրակի ծավալով), հրատարակում երնակ առանձին բուլետեններ (4 եջանոց տեղեկագրներ), փոքրիկ գրքույկներ (տետրակի քառորդի չափ, 8—16 եջ). —այսպիսի ընուզթի հարցատետրիկներ (կենդանիների ու բուկսերի մասին), անդամահատության ձեռնարկ, համառոտ ատլասներ (տվյալ վայրում տարածված գեղատու բուկսերի, խոտաբույսերի, սունկերի, բուժաբար բուկսերի), գործնական աշխատանքների ձեռնարկներ, —իհարկե, բոլորն ել նկարազարդված: Այդպիսի հրատարակություններ լուս պիտի ընծալի մեծ քանակով (գոնե 50—100 որինակ), տպագրել ապակետիպով կամ ավելի մատչելի՝ խմբութափով:

Նախագահը ղեկավարում ե բարորոի նիստերը և ընդհանուր ժողովները: Խմբակի անդամները կամ անմիջապես և կամ նախագահի միջոցով գիտական կապ են ունենում ընդհանուր ղեկավարի հետ:

Յեթե խմբակն ունի առանձին խմբակային սենյակ (թանգարան, կենդանի անկյուն), ապա վերջնիս պիտի նշանակվի հատուկ վարիչ, վորը կկանոնավորի կենդանի անկյան լրիվ ոգտագործման աշխատանքները: Այդ սենյակում կկատարվեն գործնական աշխատանքները: Այդտեղ պիտի սովորեն հետախուզական գործնական գիտելիքներ —զանազան կոլեկցիաներ կազմելը և այլն:

Խմբակի աշխատանքների արդյունավետությունը պահանջում ե լուրջ և բարեխիղմ վերաբերմունք անդամների կողմից: Գործն այնպիս պիտի կազմակերպել, վոր անպայման խմբակի

բոլոր անդամներն ել, թեկուղ չնշին չափով, աշխատանքներին մասնակցեն ու զբաղված լինեն։ Խմբակը աշխատանք չունեցող և դիտողություններից խուսափող անդամ չպիտի ունենա։

Յեթե կարիք լեղավ, խմբակը կարելի յև բաժանել սեկցիաների. որինակ՝ բուսասերների, կենդանասերների, հանքաբան-յերկրաբանների, ողերեւությանների (առհասարակ ֆենոլոգիական յերեւության դիտողներ), իհարկե, չպետք ե պարտադրել բնասերին սահմանափակվել նեղ մասնագիտությամբ—մեկ սեկցիայով։ Բոլորի աշխատանքներն ել միմյանց հետ սետուրեն կապված պիտի լինեն։ Դեկավարի հոգմն ե բոլորին դիտողությունների, ուսումնասիրությունների համար նյութ տալ։

Ամեն մի անդամ պետք ե ունենա իր որագիրը, վորտեղ գրանցվելու լեն բոլոր ուշագրավ և թեկուղ աննշան դեպքերի դիտողությունները. դիտողությունները կարող են կատարվել յուրաքանչյուր անհատ բնասերների կողմից, բայց գերադասելի լե խմբակայինը և պիտի խուսափել անհատական դիտողություններից։ Անհրաժեշտ ե վորեւ թեմա տալ յերկու-յերեք, գուցե և ավելի (նախած նյութին) հոգուց կազմված կոլեկտիվներին։ Կոլեկտիվ աշխատանքի դեպքում թե գործը կհեշտանա և թե հարցերն ել ավելի բազմակողմանի ու լրիվ կլուսաբանվեն։

Ընդհանուր ժողովներում, բացի կազմակերպչական հարցերից, պետք ե գեկուցումներ դրվեն նաև այս կամ այն կոլեկտիվի աշխատանքների մասին։ Ընդհանուր ժողովին մասնակցում են բոլոր անդամները։ Փոքր, անփորձ բնասերներն այդ ժողովներում իրենց ավագ ընկերներից աստիճանաբար փորձառություն ձեռք կբերեն։

Թե աշխատանքների կանոնավոր ընթացքի համար և թե ժողովների ու եքսկուրսիաների կանոնավոր կազմակերպության համար—անպայման անհրաժեշտ է, վոր խմբակն ունենա վորոշ կանոնադրություն։ Աշխատանքի և փոխհարաբերությունների վորոշ դիսցիպլինա անպայման անհրաժեշտ է, ալլապես գործը կկաղա. ուստի անհրաժեշտ է հենց սկզբից կազմել կա-

նոնադրության նախագիծը (դրանով կզբաղվի ժամանակավոր հատուկ հանձնաժողովը), վորը (նախագիծը) ընդհանուր ժողովում, քննության կարգով վորոշ փոփոխությունների լենթարկելով, վերջնական խմբագրությունն ու հաստատությունը կըստանա։

Հաստատված կանոնադրության բոլոր կետերը լրիվ պետք ե կիրառվի բոլոր անդամների կողմից։

Կանոնադրության մեջ նախ պետք ե շեշտվեն՝ խմբակի բուն նպատակը, ծրագրված աշխատանքների բնույթը, նրանց կիրառման միջոցները, կազմակերպչական սիստեմը, անդամների պարտականությունները։

## 2. ԱՇԽԱՏԱՎՈՐ ԲՆՈՒՅՑԹԸ

Խմբակի հիմնական խնդիրը—հետախուզական աշխատանքն ե։ Բնասեր-գավառագետը դիտում է բնույթյունը տանը, դպրոցում (յեթե կա պարտեզ, կամ բնագիտական թանգարանում, կենդանի անկյունում) և գլխավորապես բնույթյան գրկում։

Բոլոր ալլ աշխատանքների համար անպայման անհրաժեշտ են դեկավարի նախնական ցուցմունքները, առանց վորոնց հաճախ բնասերը մեկ դիտողությունը չափարտած, անցնում է մի ուրիշի, և յերեմ ել յերկումն ել մնում են թերի։ Որինակ, բավական չե տանն ունենալ ճագար կամ մի վորեւ այլ կենդանի և հետեւել նրանց—կերակրելով և բունը մաքրելով. անհրաժեշտ ե բնասերի ձեռքը տալ դիտողության ծրագիր, նույնիսկ վորոշ դեկավար հարցեր. այդպիսի դեպքերում բնասերի դիտողությունը ցրված, անկապ չի լինի, ավելի հետաքրքիր և կենդանի կանցնի։ Դիտողն այդ դեպքում կիմանա, թե դիտողությունը վօրտեղից սկսել և ինչով վերջացնել։

Մի ուրիշ որինակ. վոմանք տանն այգի կունենան—հետախուզության հարուստ միջավայր։ Իհարկե, առանց վորոշ ծրագրի բույսեր, կենդանիներ (մանավանդ միջատներ) հավաքել, կոլեկցիա կազմել—հետախուզական աշխատանք չե.՝ ան-

հրաժեշտ ե բնասերին ցուց տալ, թե այդու վոր կողմի վրա ուշադրություն դարձնել և ինչ ուղղությամբ դիտողություններ անել և կողեկցիաներ կազմել։ Անհրաժեշտ ե ուսումնասիրել այգիների վոչ թե առանձին առարկաները (բույս, կենդանի), այլ ընտրել մի ընդհանուր հարց և դրա հետ կապված առարկաները դիտել, և այդ դեպքում այդու կյանքն ավելի լայն կպատկերանա, նրա այս կամ այն նշանակությունը մեզ համար ավելի ուժեղ կշեշտվի, կպարզվեն նրա պակասություններն ու առավելությունները։ Բերեմ առայժմ մի թեմա—«պողատու ծառերի վնասատուները»։

Մի հանգամանք մի գուցե քիչ դժվարացնի ընդհանուր կոլեկտիվ աշխատանքը։ Դպրոցական խմբակում կարող են դրվել տարբեր հասակի աշակերտներ (մանավանդ՝ 7-ամյակներում և 9-ամյակներում, իսկ տեխնիկումներում—հարցը հեշտ է լուծվում)։ Այս դեպքում աշխատանքի ընույթն ըստ տարիքի պիտի փոխվի։ Սովորաբար անդամներին լերեք խմբի լեն քածանում՝ 1. շատ փոքրերի խմբակ, 2. միջին տարիքի խըմբակ և 3. մեծերի կամ բարձր դասարանների խմբակ։

Փոքրերին դիտողության համար կարելի յե տալ առանձին կենդանիներ, բույսեր (աճեցում, խնամք, կյանքի դիտողություն)։ Նյութ շատ կարող ե լինել, որինակ։ 1. իմ ճագարը, 2. կատուն, 3. Շունը, 4. Խլուրդը, 5. Վոզնին, 6. Ծառագործը, 7. Կանաչ (կամ ուրիշ) մողեսը, 8. Խոշոր բգեղներից՝ ջրասեր բգեղ, բգեղ-լեղջերու և ուրիշն։, 9. Ճնկղուկ, ագռավ և ուրիշն։ Բույսերից՝ ընտանի բույսերից շատերը, սովորական բույսերի աճեցման ձեր (որինակ՝ լորու, սիսեռի և աղն), մի խոսքով՝ դիտողության առարկաներ կարող են շատ լինել։ Անպայման դեկավարը փոքրիկ բնասերի ձեռքը կտա հարցատերիկ։ Զպիտի խուսափել փոքրիկների աշխատանքից, սրանք նախ բավականաշափ նյութ կհավաքեն եքսկուրսիաների ժամանակ, ապա թեթև դիտողությունների վրա վարժվելով՝ խմբակի ապագա լուրջ հետախույզները կլինեն։

Ավելի լուրջ դիտողություններ կարելի յե առաջարկել

միջին խմբակին։ Յեթե վորևէ կենդանի յե ուսումնասիրվում, դիտողությունը պիտի արվի բազմակողմանի, — բացի կենդանու կազմությունից (միշտ այդ հարցը կապելով միջավայրի, սննդի հետ), պետք ե ուսումնասիրվեն նրա շրջապատը, կյանքի պայմանները. պարզվեն թշնամիները, բարեկամները, սերուդ տալու և խնամելու լեղանակը։

Որինակ, վորպես թեմաներ կարող են ծառայել՝ 1. Սպիտակ մկների կյանքը (արագ են բազմանում և դիտողության լավ նյութ են, լինում են սպիտակ մեծ մկներ. լավ ե նաև ծովախողուկը). 2. Մեր այգու գորտերը—նրանց կյանքը, նշանակությունը մեզ համար. 3. Բուկսերի ստորերկրյա մվասատուներ. 4. Ջրալին բգեղների կյանքն ու զարգացումը. 5. Գորտի զարգացումը. 6. Մողեսի զարգացումը. 7. Ջրամլուկներ—նրանց կյանքը. 8. Ջրսարդ. 9. Տզրուկներ և ուրիշն։

Ջրալին կենդանիների տեսողական դիտողությունների համար անպայման պիտի ունենալ ակվարիում։

Բույսերի կյանքից—1. Ինչպես են բույսերը պաշտպանվում կենդանիներից. 2. Ինչպես են բուկսերը տարածում իրենց սերմերը, պտուղները. 3. Ինչպես են բուկսերը կովում ջրի, լուսի համար. 4. Մեր այգու (կամ տվյալ աեղի) աղբաբույսերը։

Լնիանուր թեմաներ.—1. Մեր այգու մվասատու միջատները. 2. Այգու (կամ տվյալ տեղի) ոգտակար կենդանիները. 3. Ստորերկրյա կենդանիներ, նրանց մվասն ու ոգուտը, միջավայրին հարմարվելու միջոցները։

Ամենամատչելի սկզբնական դիտողությունները նրանք են, վորոնք կատարվում են բնասերին մոտ միջավայրում՝ տանը, (սենյակների պարագիտ կենդանիները, մառանների կենդանիները), այգում, փողոցում (որինակ՝ մըջնանոց, աղբաբուղեղներ), հասարակական զբոսավայրում (քաղաքալին այգի), չիշլալ միջավայրերի որգանիզմներն այս կամ այն չափով կապված են և մեր կյանքի հետ։ համենայն դեպս, դիտողությունների ժամանակ ուսումնասիրել վոչ միայն կենդանու կառուց-

վածքը միջավայրի համեմատ, այլ և նրա ոգուտը կամ վսաւը մարդու նկատմամբ:

Ավելի պատրաստված բնասերներին (բարձր խմբերի) կարելի յետայ ընդհանուր, լուրջ հարցեր և այդ հարցերը մեծ չափով կլրեն գավառագիտական բնույթ, Յածը և միջին խըմբակների վերոհիշալ դիտողությունները, ամփոփման նյութ դառնալով և ոգտագործվելով վորեւ ընդհանուր հարցի համար, նույնպես կծառայեն գավառագիտական նպատակներին: Պատրաստված բնասերները խումբ-խումբ կվերցնեն հատուկ վայրեր, ապա կուսումնասիրեն ընդհանուր բնույթ կրող հարցերը: Ուսումնասիրության թեմաներ կարող են լինել.

1. Պատղատուծառերի վնասատուները (իհարկե, խոսքը ավալ գուղի կամ քաղաքի մասին ե).

2. Բանջարանոցի վնասատուները.

3. Այս կամ այն ջրավազանի (водоем)՝<sup>—ա</sup>) ջրաբույսերը, ք) միջատները, գ) միջատակեր-բույսերը, դ) ջրիմուռները, է) ձկները, զ) յերկկենցաղները, ե) վորդերը, ը) փափկամորթները.

4. Այգիների փափկամորթները

5. Այգիների վնասատութունները.

6. Այգիների ոգտակար թոշունները.

7. Մեր վայրի չփող թոշունները.

8. Մեր լնտանի կենդանիները.

9. Մեր քաղաքի, գյուղի դեկորատիվ բույսերը.

10. Զմեռող թոշուններ:

Յեթե մոտակայքում անտառ կա՝

1. Անտառի ծառերը.

2. » կաթնասունները.

3. » թոշունները և այլն:

Վորեւ միջավայր՝ անտառ, այգի, լիճ, ձահիճ, բանջարանոց ուսումնասիրում ե մի շարք հետախուզական կոլեկտիվների միջոցով: Մի խումբը դիտում ե բույսերը, միունքը

ջատներին, յերրորդը — վողնաշարավոր կենդանիներին և այլն և այլն: Բնասերի աշխատանքը չպիտի սահմանափակել. յեթե նա արդյունավետ աշխատանք ե կատարում մի քանի կոլեկտիվ-ներում — թող անի: Ի վերջո բոլոր կոլեկտիվները համախմբում են իրենց դիտողությունները, և այդ դեպքում հնարավոր ե լինում տվյալ համայնքի (օճայքություններ) լրիվ պատկերը ցուցաբերել: Կատարած դիտողությունները հիմք կարող են ծառացնոր կոլեկտիվների համար: Վերջիններն ուշադրություն կդարձնեն շլուսաբանված հարցերի վրա:

Իհարկե, բոլոր հետախուզությունների ժամանակ ել, հնարավորությունների սահմանում, պիտի կոլեկցիաներ կազմել. իսկ յեթե հնարավոր չե, — նկարել, կամ նկարագրել:

Բերենք կոլեկտիվ ուսումնասիրության մի որինակ: Կ. քաղաքում 1 կիլոմետրի վրա գտնվում ե արվեստական պուրակ (պարկ, 50 գետափին) կանոնավոր կվարտալներով. տնկված են բազմատեսակ, նույնիսկ հազվագյուտ ծառեր: Ծառերի տակ հետզհետեւ բնական ճանապարհով հայտնվել են խիտ տունկերու խոտաբույսեր: Հետզհետեւ անտառը լցվել ե բազմատեսակ կենդանիներով: Ուսումնասիրության համար կազմակերպվեցին մի քանի հետախուզական եքսկուրսիաներ: Նախորոք «հողաչափական» կոլեկտիվը կազմել եր պարկի մոտավոր պլանը (հատակագիծը):<sup>1</sup> Բնասերները բաժանվեցին նոր կոլեկտիվների, յուրաքանչյուրին տրվեցին մեկական կվարտալ (կամ մի քանի, նայած չափին): Ապա սկսվեց ուսումնասիրությունը. ամեն մի կոլեկտիվ հատակագիծի վրա նշանակում եր ժամանակավոր նշաններով՝ դիտված ծառերի անունները, յեթե գիտեր, ծառի կտրած տերերը, խոտաբույսերի, տունկերի ծաղիկները: Աշխատանքի վերջում բնասերը զեկավարի ոգնությամբ հատուկ գրքերով ստուգում եր: Դիտվում եր յուրաքանչյուր կը վարտալ չորս կողմերից, ապա ներսից: Հատուկ խմբեր ել տվյալ կվարտալի խոտաբույսերն ենին հավաքում. վոմանք ել

<sup>1</sup> Յեզ այդ հատակագիծը բազմացրած եր խմբություն:

կենդանական աշխարհն ելին դիտում։ Ամեն մի կվարտալի նյութերը, գրությունները, հավաքած բույսերը, կենդանիները — պահպում են հատուկ պապկալում կամ արկղներում։ Անտառը մեծ եր. կատարվեցին մի շարք եքսկուրսիաներ, բայց աշխատանքը մնաց դեռ թերի։ Հնարավոր յեղավ հատակագծի վրա լրիվ նշանակել բոլոր տեսակի ծառերը, վորոշ խոտաբույսեր, վորոշ կենդանիներ։ Կոլեկտիվների դիտողությունները համախմբվում, ամփոփվում ելին։

**Ստացվեց** մի հետաքրքրական աշխատանք։ Խմբակը հրատարակեց յերկու պրակ-ուղեցուցներ՝ «Ն պուրակը» վերնագրով. լուրաքանչուրում կար պուրակի հատակագիծը, նրա վրա նշանակված ելին ծառերը (հատուկ նշաններով), և միաժամանակ առանձին-առանձին գծված ելին այս կամ այն ծառի տերևները։ Խմբակի այդ ուղեցուցներով շատ-շատերն ոգտվում ելին՝ պուրակի ծառերին ծանոթանալու համար, Յեզ այդ պուրակը բավականաչափ նյութ տվեց բնասերների բազմաթիվ դիտողությունների համար—թե բույսերի և թե կենդանիների վերաբերմամբ։

**Մի** ուրիշ որինակ։ Ճահճացած լիճ, վորի բուսական և կենդանական աշխարհը բավական հարուստ և հետաքրքրական են։ Ամերից առաջ գծվեց լճի մոտավոր հատակագիծը (նույնպես բազմացվեց)։

Հետախուզական խմբերը լճի զանազան մասերում ուսումնասիրում ելին ջրալին կյանքը։ Դիտված կենդանիներին ու բույսերը նշանակում ելին հատակագծի վրա և հավաքում կուեկցիաների համար։ Հավաքած նյութն այնուհետև դիտողությունների առարկա յեր ծառալում։ Այդ աշխատանքն ամփոփվում եր ընդհանուր ուժերով, իսկ հավաքած նյութերից կոլեկցիաներ կազմվում։ Թանգարանի համար լճի անհրաժեշտ հատակագիծը գծվեց մեծ թղթի վրա և նախընթաց հետազոտության նման, այստեղ ևս նշաններով ցույց եր արվում թե վոր մասում լինչ որդանիզմներ ելին հանդիպում, և կողքին նկարվում գտնված

կենդանիները, բույսերը։ Այդ գեպքում քարտեզն ավելի ուսուցանելի և հետաքրքրական եր դառնում։

Կոլեկտիվ հետազոտության վայրեր ամեն տեղ ել կարող են լինել։ Յերևանի շրջակայքում և քաղաքում նույնպես կան. որինակ, արժե ուսումնասիրել՝

1. Զանգուի ձորը. — Վերցնել մի վորոշ տարածություն քաղաքից վոչ հեռու և դիտել ու հետազոտել նրա ափերի բուսական և կենդանական աշխարհը, ջրի բնակչությունը (ձկներ, ջրաբույսեր և այլն)։


2. Խոյսմախան գյոլ. — Բարձր տեղից կարելի կլինի մոտավոր հատակագիծը գծել։ Դիտել լիճը տարբեր ժամանակ (մանավանդ ջրառատ). նրա բուսական և կենդանական աշխարհը. իսկ միկրոսկոպով՝ միկրոսկոպային աշխարհը։ Այս լիճը հետազոտական մի քանի կոլեկտիվներին բազմատեսակ թեմաներ կարող ե տալ։

3. Նորք. — Այգիները. նրա պտղատու և գեկորատիվ բույսերը, կենդանական աշխարհը (ընտանի ու վայրի, ոգտակար և վնասատու միջատներ, թռչուններ և այլ կենդանիներ), պտղատու ծառերի հիվանդությունները։

4. Ղուեր. — Նրա որգանական աշխարհը։

5. Կայարանի մոտ յեղած նամինեներ. — Նրանց բուսական և կենդանական աշխարհը, միկրոսկոպային որգանիզմների աշխարհը։

6. Առաջին Խորհրդային տնտեսություն. — Թվում ե, թե տնտեսության վարչությունը սիրով հնարավորություն կտախսկական բնասերներին ուսումնասիրելու այդ հետաքրքիր Խորհ. տնտեսությունը։ Խմբակը ժամանակի ընթացքում բոլոր դիտողությունների հիման վրա հնարավորություն կունենա հրատարակելու մի նկարագարդված ուղեցուց։ Այս Խորհ. տնտեսությունում կարելի կլինի վարչությունից խնդրել տնտեսության հատակագիծը և արտանկարել ու բազմացնել։ Հատակագծի վրա պետք ե նշանակվեն վոչ միայն կուլտուրական բույսերը (պտղատու ծառեր և այլն)։ Այս Խորհ. տնտեսությունից բուսականությունը,



կենդանական աշխարհը (կուլտուրական և վայրի): Թվում ե, վոր յեթե բնասերներն յերբեմն առաջարկեն իրենց ուժերը Խորհ. անտեսության այս կամ այն աշխատանքների ժամանակ, որինակ՝ վնասատուներ վոչնչացնելու և ուրիշ նման աշխատանքներում — վարչությունը չի՝ մերժի: Խմբակն այդ նպատառակին հեշտ հասնելու համար պիտի կազմի նաև համարանի գյուղֆակի բնագիտական խմբակի հետ:

7. Քաղաքի դեկորատիվ բույսերը: — (մանավանդ հազվագյուտուուորինակներ, հենց վերցնենք լորենին՝ Աբովյան փողոցի վրա): Գծել վորոշ փողոցների հատակագիծը և նշանակել նրա վրա յեղած հազվագյուտ ծառերը:

8. Մի գուցե քաղաքում լինի վորեե հազվագյուտ, որինակելի այգի: Բնասերներն ամեն կերպ պետք ե աշխատեն ոգտագործել և այդ այգին, իհարկե, հետախուզական նպատակներով:

9. Կոմունարների այգին: — Սրա՛ հատակագիծը կարելի յե արտանկարել գավգործկոմում յեղած որինակից, հակառակ դեպքում կարելի յե գծել մոտավոր ճշտությամբ: Նշանակել ծառուղիների յերկու կողմերի ծառերը, նրանց տակի բուսական և կենդանական աշխարհը. կարելի յե նշել նաև ինչ դեկորատիվ բույսեր են աճեցնում ծաղկանոցում ու ջերմոցներում:

10. Բուլվար. — Փոքը աշխատանք ե, բայց ելի ավելորդ չեր լինի ունենալ սրա նկարագիրն ես. շատ շատերը այստեղ յեղած ծառերի, տունկերի անուններն ել չգիտեն:

Մի գուցե ելի ուրիշ հետաքրքրական վայրեր կան, այդ մասին, իհարկե, կիմանան բնիկ յերեանցիները. Ամեն մի գավառում նման, գուցե և ավելի հետաքրքրական բնական համայնքներ կարող են լինել — արհեստական անտառ, լիճ, ճահիճ և այլն, ապա ուրեմն բնագիտական-գավառագիտական խմբակի պարտականությունն ե՝ ուսումնասիրել այդ համայնքները:

### 3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դավառի պատկերը վոչ միայն բնական հարստությունների նկարագրությամբ ե պարզվում, այլ և այն բանով, թե մեր տնտեսության համար ինչ բնական նյութ ե ողտագործվում և մշակվում:

Վերը հիշած խմբակն իր ծրագրի մեջ մի կետ ևս ուներ — ուսումնասիրել քաղաքի մոտակալքում շրջակալքի այն արդյունաբերությունը, վոր մշակում ե բնության տված հում նյութերը: Այդպիսի տեղեկությունները գավառի ուսումնագիրության համար խոշոր նշանակություն ունեն:

Այդ կազմակերպվում ե այսպես: — Խմբակն այս կամ այն արդյունաբերական հիմնարկներն ե գործուղում հետախուզական կոլեկտիվներ<sup>1</sup>, վոչ ավել քան տասական հոգուց կազմած:

Անդամների մեջ ներքին աշխատանքի բաշխում կատարում ե ինքը կոլեկտիվը: Կոլեկտիվների մեջ անպայման նկարիչներ ել պիտի լինեն, վորոնք նարկավոր առարկաները գծել կարողանան: Կոլեկտիվը բազմակողմանի ծանոթանում ե արդյունագործության հետ և ամեն ինչ գրի առնում: Նկարագրվում են՝ վորոշ մեքենաները, հում նյութերի մշակման աշխատանքի ամբողջ ընթացքը, ստացած արդյունքները: Անշուշտ պետք ե ուսումնասիրեն նաև աշխատանքի առողջապահական և այլ պայմանները: Միաժամանակ հավաքում են այն իրերը, վորոնք նյութի մշակման բոլոր հիմնական շրջանները ցուց կտան: Այդ իրերը պիտի ամրացնել մեծ ստվարաթղթի վրա, համարակալել, և այդպիսով կստացվի կոլեկցիին պիտի կցել համառոտ բացարություն: իսկ խմբակը անշուշտ կունենա իր մանրամասն հետազոտության արձանագրությունը: Հետախուզական կոլեկտիվներն ամփոփում են իրենց գիտողությունները ապա դեկուցում ընդհանուր ժողովում:

<sup>1</sup> Նախորդը կապվել գործարանի վարչության հետ, կոլեկտիվին ուղարկած ապահովախան պաշտոնական գրություն:

Յերեանում, որինակ, կարելի կլինի հետազոտել հետևյալ արդյունաբերական հիմնարկները՝

1. Ոճառագործություն (ձեթ-ոճառի գործարան).
2. Գարեջրի գործարան.
3. Կաշվեգործարան.
4. Գինեգործություն.
5. Կոնյակի գործարան.
6. Երամապահական կայան.
7. Կոնսերվի գործարան.

և ուրիշ այլ և այլ ձեռնարկություններ:

Ուրիշ տեղերում կարող են լինել՝

1. Մետաղանքեր.
2. Ապակեգործություն.
3. Մետաքսագործություն.
4. Բրուտագործություն և այլն:

#### 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Յուրաքանչյուր տարի մեկ կամ մի քանի անգամ (նայած հնարավորություններին) անհրաժեշտ ե կազմակերպել խմբակի աշխատանքների ցուցահանդես։ Լավ կլիներ, յեթե խմբակը ցուցահանդեսի բացման կամ նախընթաց որը մի ցերեկույթ կամ յերեկույթ կազմակերպեր, — այդ կլինի խմբի յելույթը ամբողջ աշակերտության և գավառի հասարակական կազմակերպությունների առաջ։ Յերեկույթն ու ցուցահանդեսը կհանդիսանան գավառագիտական հետախուզությունների պրոպագանդայի լավագույն միջոցներ։ հասարակությունը կսկսի աստիճանաբար ավելի հետաքրքրվել իր վայրով և ամեն կերպ կաջացի այդ աշխատանքներին։

Յերեկույթի ծրագիրը կարող է այսպես լինել։ Նախ ընդհանուր համառոտ գեկուցում խմբակի կատարած տարվա աշխատանքների մասին։ ապա մեկ-յերկու ընդհանուր բնույթ կրող համառոտ գեկուցումներ՝ հետաքրքրվել հարցերի մասին և ապա բնասերների դիտողության արդյունքները։ Որինակ՝ հենց

հետեւյալ թեմաների մասին, յեթե ուսումնասիրված են — «Անտառի անխնա վոչնչացման հետևանքները մեր վայրի (գյուղի կամ քաղաքի) համար», «Երջակա ճահիճների դերը մեր կանքում», «Մալարիան մեղանում» և այլն։

Ցուցահանդեսում հավաքած կոլեկցիաները պետք ե դասավորել վորոշ սիստեմով։ ասենք, որինակ — պատին կպցնել հետազոտած լճի հատակագիծը՝ առդիր գրություններով, նկարներով։ Նրա մոտ սեղանի վրա կլինեն լճի ուսումնասիրության արդյունքները (կոլեկցիաները, սքեմաները, նկարները, հերբարիում և այլն)։ ապա — «մեր անտառի բուսական և կենդանական աշխարհը», «մեր աղբաբույսերը» և այլն։

Խմբակի պարտականությունն ե հերթով լրիվ բացատրություններ տալ ցուցահանված իրերի մասին, այլապես ցուցահանդես կազմակերպելը միտք չունի։ Նաև անհրաժեշտ ե, վոր յուրաքանչյուր իր մի հատուկ թղթի վրա ունենա իր համառոտ նկարագրությունը։

Նյութեր ունենալու դեպքում (վորի համար պիտի աշխատել) տարվա ընթացքում ևս նույնպիսի ցուցահանդեսներ արժե կազմակերպել։ որինակ, — բնուրյունը զարնանը սեղանում, բնուրյունը ձևանակը և այլն։ Այսպիսի դեպքերում պիտի ցուցահանել միայն այն բույսերն ու կենդանիները, վորոնը տարվա տվյալ ժամանակում են հանդիպում։ Բնությունը լրիվ ցուցահաններու համար, ալդպիսի դեպքերում կարելի յէ ցուցահանել նաև դպրոցի թանգարանի ունեցած կոլեկցիաները։ որինակ՝ խրտվիլակներ, յեթե դրանք վերաբերում են տարվա տվյալ ժամանակին։ Իհարկե, խոսքը տվյալ վայրի, գավառի բընության մասին ե։ խրտվիլակները, կենդանի եքսպոնատները ցուցահանված բույսերն ու կենդանիները նույնպես տվյալ վայրից պիտի լինեն։

Կրասնոդարի պատանի բնասերների խմբակի կատարած հետախուզական ու հետազոտական աշխատանքներից մի յերկուսի հետ ձեզ արդեն ծանոթացրի։ ուստի ավելորդ չեմ համարում տալ նաև նրա հաշվետու ցուցահանդեսի նկարը։



Կրասնոդար քաղաքի պատաճի բնասերների խմբակի հաւաքեռու ցուցահանդեսը (1924 թ. V):

Առջևում (ձախ կողմից)՝ տերրարիում եւ՝ ոնքերով (լորտուներ) ձախ պատին ստվարաթղթերի վրա՝ արդյունաբերական և սերմերի կոլեկցիաների. Դիմացի պատին, ձախից՝ ֆենոլոգիական կոլեկցիաները, բուսական առանձին մասերի զարգացման կոլեկցիա (բողբոջի, սերմի, տերերի): Կենտրոնում՝ վերևում՝ Դարվինի և ներքեսում՝ Մարքսի նկարը. Աջ կողմում՝ լուսանկարները՝ եքսկուրսիաների, փորձերի (կենդանակազմերի հիպնոզ) ու լերկու քարտեզները. Ձախ կողմում՝ պուրակի (պարկի) հատակագիծը, ծառերի տեսակների նմուշներով, իսկ աջ կողմում՝ «Պայտ» կոչված լճի հատակագիծը. մանանշված են, թե վոր կողմում ինչ բույսեր և կենդանիներ են պատահում (սրանցից մեծ մասը նկարված են). այս լերկու քարտեզները կոլեկտիվ հետազոտության արդյունքներ են: Սեղանի վրա, ձախ պատի տակ՝ հերքարիուներ, խմբակի՝ թերթերը, որահուշատերները, հրատարակությունները, Դիմացի սեղանի վրա՝ կենդանաբանական կոլեկցիաները. գանգեր, միջատների կոլեկցիաներ ապակեպատ տուփերում: Աջ սեղանի վրա, ձախ անկյունին՝ իշխանառնչի կավից ծեփած բունը՝ միջատներով (ապակեպատ տուփում), Նստածները խմբակի բլուրովի անդամներն են (միջին և փոքրերի սեղիների ներկայացուցիչները. Փոքրը վզից կենդանի լորտու է կախել):

## 5. ԿԱՄՊԱՆԻԱՆԵՐ

Խմբակը պետք եւ մասնակցի նաև մի շարք ալիքիսի կամպանիաների, վորոնք տվյալ վայրի բնության բարելավման համար անհրաժեշտ կլինեն:

Որինակ՝ անհրաժեշտ եւ կազմակերպել, կամ յեթե ուրիշն եւ կազմակերպում՝ աջակցել, մասնակցել հետեւյալ կամպանիաներին.

1. «Անտառի որ»: — (բուլսերի, ծառատունկերի տարածման որ)՝ ըստ տեղի ուժամանակի կարիքի՝ ծառեր տնկել՝ պարտեզ, ծառողիներ, արհեստական անտառներ ունենալու համար:

2. «Պայմար վնասատուների դեմ»՝ որինակ՝ մորեխների, դաշտամկների, թրթուների գեմ (անհրաժեշտ եւ նախորոք այդ մասին մանրամասն զեկուցումներ լսել և լուրջ նախապատրաստվել):

3. Պայմար մալարիայի դեմ. — մոծակների վոչնչացնելը, նրանց սաղմերի վոչնչացնելը ճահիճներում, ճահիճների չորացնելը (իհարկե, այս մասին ևս պետք եւ զեկուցումներ լսել և գործի անցնել հմուտ զեկավարների հսկողության տակ):

4. Պայմար հանճերի դեմ. — պըռպագանդա մղել, ցուցմունքներ տալ բոլոր այն միջոցների մասին, վորոնք ճանձերի վոչնչացման կնպաստեն:

5. Բերքի որ:

6. «Թոչուների որ»: — ոգտակար թոչունների պաշտպանության պըռպագանդա. գործնական քաղեր. հասարակական և դպրոցական այգիների թոչունների բների վերանորոգում, կամ փոխարինումը նոր, ավելի հարմար բներով և ազն, և ազն:

Բոլոր այդ կամպանիաների ընթացքում գավառագետնագետը գիտողությունների համար կդտնի մի շարք թեմաներ:

Այգիսի կամպանիաներին պիտի մասնակցել կազմակերպված: Իհարկե, մի առ ժամանակ առորյա աշխատանքը կարող եւ ընդհատվել ու մասամբ խանգարվել. այդ վոչինչ, բլուրոն կմշակի աշխատանքի կանոնավոր ծրագիր, ապա կոլեկտիվները կանցնեն կամպանիոն աշխատանքներին:

## 6. ՊԱՏԱՆԻ ԲՆԱՍԵՐՆԵՐԸ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղատնտեսության կոլեկտիվացման որերին անպայման վորոշ անելիքներ ունի նաև պատանի բնասերը: Նա ևս այդ աշխատանքներում այս կամ այն կերպ պիտի մասնակցի: Կոլտնտեսության դպրոցի պատանի բնասերների խմբակը և կամ թե ժամանակավորապես կոլտնտեսություն ուղեղորդող պատանի բնասերների խմբակները, պետք ե կոլտնտեսություններին ոգնության գան: Խմբակների ծրագրի մեջ այդ աշխատանքն ևս պետք ե նախատեսնվի: Իհարկե, դա արժեքավոր և լուրջ հարց ե, հետևաբար պետք ե կատարվի լավ մտածված ու կազմակերպված, վորպեսզի դրսից յեկած բնասերների գործումները զբոսանքի չվերածվեն:

Այս աշխատանքն եւ կոլեկտիվորեն պետք ե կատարվի: Առանձին հետախուզական կոլեկտիվները պիտի կազմվեն նախորոք այնպես, վոր կոլտնտեսություն յեկող ամեն մեկն իմանա իր կատարելիք աշխատանքը:

Պատանի բնասերներն աշխատանք կտանեն իրենց ուժի սահմանում, իսկ հավաքած նորութերի լուրջ մշակումը կկատարվի մասնագետ դեկավարների ոգնությամբ:

Խմբակի հետախուզությունները կընդգրկեն ամբողջ բնությունը: Զմոռանալ, վոր հետախուզությունների հիմնական նըպատակը պիտի լինի—ոժանդակել կոլտնտեսության այս կամ այն աշխատանքներին:

Հետախուզական խոշոր կոլեկտիվները պիտի բաժանել յենթակողեկտիվների: Աշխատանքները պետք ե լինեն յերկարատև և ամենեին կամպանիաների բնույթ չպիտի կըեն: Բոլոր կոլեկտիվների հետախուզությունների ամփոփումը կպարզի կոլտնտեսության դրությունն ու նրա կարիքները:

Ուսումնասիրության հարցերն են՝

1. Կոլտնտեսությունն աշխարհագրական տեսակետից—աճանապարհը դեպի կոլտնտեսություն.

բ. Դիրքը, տեղը, շրջապատը.

գ. Կլիմայական պայմանները—յեղանակները, մթնոլորտային տեղումները, տիրող քամիները<sup>1</sup>.

դ. Ջրերը—լիճ, ճահիճ, գետ, աղբյուրներ, հորեր (սովորական կամ արտեզյան) նրանց նշանակությունը կոլտնտեսության աշխատանքների համար, բնակչության համար, դրական, բացասական կողմերը, ոգտագործման հնարավորություններն ու արգելքները.

յ. Հողը—նրա տեսակները, վորակը, պարունակող հանքերը, լեռնային տեսակները, շինանյութերը—ոգտագործման հնարավորությունները<sup>2</sup>:

## 7. ԿԵՆԴԱՆԻ ԱՇԽԱՐՀ

ա. Բուսական աշխարհ: Վայրի ծառեր, տունկեր, խոտաբույսեր. նրանց տված ոգուտն ու վնասը: Բույս-պարագիտներ:

Կոլտուրական բույսեր. (պտղատու, հացաբույսեր, բանջարեղեն, տեխնիկական և ուրիշ). բույսերի մշակման ու խնամքի ձեւերը:

Հիմնական աշխատանք կլինի—վնասակար խոտաբույսերի՝ բույս-պարագիտների վոչչացնելը, ինչպես նաև բույսերի խնամքի աշխատանքներում ոգնություն ցույց տալը:

Պարզել կոլտուրական բույսերի մշակման որական արդյունքները և բացերի պատճառները:

Դեղաբույսեր, մեղրաբույսեր:

Հետազոտել կոլտնտեսության կից անտառը, մարգերը, դաշտերը, հովիտները և նրանց ոգտագործելու հնարավորությունները:

բ. Կենդանական աշխարհ: Վայրի կենդանիները. բոլոր

<sup>1</sup> Այս դիտողությունների համար ֆավառագիտ. Կենբյուրոն հրատարակելու յեւ հատուկ գրքույկ:

<sup>2</sup> Այս հարցի համար նաևել՝ Զառաֆյան—«Յերկրաբանական դիտողություններ»: (Գալառ. Կենտբյուրոյի հրատարակություն):

տեսակի վնասատուների դեմ կոլեկտիվ պայքար։ Վալրի կենդանական թշնամիներն ու բարեկամները — կոլտնտեսության ներսում և նրա սահմաններից դուրս։

Դիտվածներն անպայման պետք ե գրի առնվեն, և համապատասխան կոլեկցիաներ կազմվեն։ Հավաքած նյութերը պետք ե մշակվեն գիտական դեկավարների ոգնությամբ։ Միևնուն կոլտնտեսության մեջ աշխատող բազմաթիվ տարբեր կոլեկտիվների կատարած հետախուզություններն իրար կապելով՝ կստացվի կոլտնտեսության դրության ամբողջական պատկերը։ Կպարզվեն բոլոր այն կարիքներն ու բացերը, վորոնց վերացման նկատմամբ արված բոլոր ցուցմունքներն ու ձնոնարկումները կբարձրացնեն կոլտնտեսություններին։

Կոլտնտեսությունների ուսումնասիրության մեջ պետք ե մտնեն նաև հետևյալ հարցերը՝

ա. Կուլտուրական բույսերի տեսակները, նրանց տված արդյունքները, արտահանվող և դրսից ներմուծվող բուսական մթերքները։

բ. Ընտանի կենդանիները. նրանց աճեցման, խնամքի, ազնվացման ձևերը, նրանց տված արդյունքները. Ի՞նչ կենդանական մթերքներ են արտահանվում և ներմուծվում։

չիշալ հարցերի վերաբերմամբ նկատված թերություններն անմիջական ցուցմունքներով և ոգնությամբ պետք ե վերացվեն։

դ. Հիվանդություններ—մարդկանց, կենդանիների, բույսերի պատճառները, դրդիչները, վերացնելու համար ձեռք առնվող միջոցները, նկատված բացերը։

դ. Հողի մշակման ձևերը, այդ աշխատանքի մեքենայացման չափը. գործածվող պարարտանյութերը. Գիուղատնտեսության մյուս ճյուղերը (բանջարաբուծություն և այլն),

յե. Բնական յերեսութների գիտողության ձևերը (ողերեվութաբնական)։

Բացի այդ գործնական հարցերից պատասի բնասերների, աշխատանքի մեջ պետք ե մտնեն նաև. — բնական գիտելիքնե-

րի տարածման և հակակրօնական պրոպագանդի գործը։ Զըռուցաների համար ինկատի պիտի ունենալ հետեւյալ թեմաները՝

1. Գիուղատնտեսությունը և բնական յերեսութները.
2. Գիուղատնտեսությունը և քիմիան.
3. Գիուղատնտեսության վնասատուները.
4. Բույսերի և կենդանիների ազնվացումը.
5. Մարդկանց հիվանդությունները և նրանց պատճառները.
6. Գիտության նվաճումները (հատկապես գյուղատնտեսությանը զարկ տվող)։

Բնդիանուր հակակրօնական բնույթ կրող թեմաներ՝

1. Յերկրի ծագումը.
2. Կյանքի ծագումը և զարգացումը.
3. Մարդու ծագումը.
4. Հրաշներ և գիտությունը.


և ուրիշ բազմաթիվ նման թեմաներ։

Կոլտնտեսություններին ոգնելու աշխատանքներն սկսելուց առաջ հարկավոր ենախորոք ընդհանրապես իմանալ՝ վո՞րտեղ և կոլխոզը, մոտավորապես ի՞նչ կարիքներ կարող ե ունենալ (ինարկե, այդ հարցը մանրածասներեն տեղում կպարզվի), ապա գործուղվող խմբակը գնալուց առաջ կզինվի անհրաժեշտ տեղեկություններով, գրականությամբ, կոլեկցիոներական պարագաներով։ Տեղում կատարած հետախուզություններն ավելի կպատկերավորեն նախորոք ծրագրած զրուցները։

Հավաքած կոլեկցիաները հարուստ նյութ կծառայեն յերկարատե ուսումնասիրությունների համար։

Վերը նշած մի շարք դիտողությունների համար Գավառագիտական կենտրոնն պատրաստել և հարցարաններ։

Քարտ 1



Քարտ 1

Եկարներ—1. Խոշորացուց. 2. Բուսարկղ (ձախ կողմում—հատուկ տեղեր միջատների համար). 3. ա. Ստվարաթղթից բուսանիզիրկա բնչպես պատրաստել (\*), ստվարաթղթի կետերի ուղղությամբ յեզրերը կարգում են, խոշոր է կողմից կտրվում ե, մեկ կողմից (\*\* կետավոր կողմը) ծալվում ե. մոմլաթը (կլենկա) վրան ե քաշվում և կարգում. բ. Կողքերին շրջաններն են կպցնում. գ. Բուսանիզիրկան պատրաստ ե. 4. Բուսմեսուերի մամուլ. 5. Պապկա (գրքի կազմերից). ա.—Զորացրած բույսը թղթի վրա բնչպես կպցնել. բ. գ.—Տերևները թղթի վրա բնչպես կպցնել:

## II

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

## 1. ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԿՈԼԵԿՑԻԱՆԵՐ

## 1. ԻՆՉՊԵՍ ՍԿՍԵԼ

Հովիտներում, մարդագետիններում, անտառներում զբոսականանալ սոսկ տերեններ պոկոտելով։ Շատերը պակում են այս կամ այն ծառի, թփի, խոտի տերենները և անկանոն գարսում գրքի մեջ։ Նրանց թվում ե, թե բույսերի «կոլեցիա» (հավաքածու) կազմեցին։ Կամ ել—պատահած բույսի վրայից ծաղիկներ են պոկոտում, առանց նրանց մասին հուշատետրում վորեն գիտողություն անելու։

## 2. ԲՈՒՏՅԱՆ ԻՆՉՊԵՍ ՀԱՎԱՔԵԼ ՈՒ ՀԵՐԲԱՐԻՈՒՄ ԿԱԶՄԵԼ

Ամենից առաջ պիտի ասեմ, վոր բույսեր հավաքելիս չըբավականանալ սոսկ տերեններ պոկոտելով։ Շատերը պակում են այս կամ այն ծառի, թփի, խոտի տերենները և անկանոն գարսում գրքի մեջ։ Նրանց թվում ե, թե բույսերի «կոլեցիա» (հավաքածու) կազմեցին։ Կամ ել—պատահած բույսի վրայից ծաղիկներ են պոկոտում, առանց նրանց մասին հուշատետրում վորեն գիտողություն անելու։

Յեթե բույսը խոտալին ե ու կարճահասակ, — պիտի պոկել ամբողջությամբ. այսինքն՝ ծաղիկը ցողունով, տերեններով և արմատով։ Իսկ յեթե ծառ ե կամ թուփ, հետևաբար անհնարին ե արմատով պոկել, այդ գեպօռմ անհրաժեշտ ե ծաղիկը կըտրել մի քանի տերեններ ունեցող ձյուղի կտորով։

Բույսեր հավաքելու համար նախ և առաջ հարկավոր ե ունենալ մի այնպիսի անոթ, պարկ, պապկա<sup>1</sup>, վորի միջոցով հնարավոր լինի, մանավանդ տաք յեղանակին, հեռու տեղերից, առանց մնացելու, բույսեր տուն բերել։ Դրաում՝ անտառներում, արտերի յեղերքներին, հովիտներում բույսեր կհավաքեք, կղնեք ձեր ունեցած հատուկ անոթի կամ պապկալի մեջ և տուն կբերեք. ապա անմիջապես բույսերը կդասավորեք և կչորցնեք։

Պոկած ծաղիկը բաց ոդում արելի ջերմությունից կարձամանակամիջոցում թառամում ե, — իսկ այդ, իհարկե, բնասերի համար ցանկալի բան չե։ Թառամած բույսերը կարգի բերելը դժվար ե։ Վորքան հնարավոր ե, բույսերը պիտի թարմթարմ տուն բերել։

Բույսերը տուն բերելու համար կարելի յե մի քանի տեսակ բաններ ունենալ։ Գործածում են մի անոթ, վորը կոչվում ե բուսարկղ (տես քարտեզ № 1. նկ. 2)։ Բուսարկղը ծախում են պատրաստի, կարելի յե և պատվիրել թիթեղագործներին. Հարկավոր ե միայն նրանց ցուց տալ նկարը և տալ չափսերը

<sup>1</sup> Բուսապանակ։

Ծաղիկների նկատմամբ ել այդպես վարվել. անխնա չպոտաել ու վերջը թափթիել։ Պիտի թողնել, վոր մնացածները սերմեր տան, վոր մլուս տարի սերմերից ծաղիկներ դուրս գան, և հովիտներն իրենց գեղեցիկ զարդից չզրկվեն։

Բույսեր և միջատներ կարելի յե հավաքել միաժամանակ։ Բայց նախ բույսեր հավաքելու մասին պատմեմ։

և նրանք իսկույն կպատրաստեն, վորը սակայն բավականին ծախս կպահանջի: Բայց կարելի է և քիչ ծախսով և սեփական ուժեռով պատրաստել. ճիշտ ե, դա կինի հասարակ, վոչ այնքան դիմացկուն, բայց եժան կնսութիւն յուրաքանչյուր բնասեր կարող ե պատրաստել:

Պիտի պատրաստել այսպես: Վերցնել դեղնագույն կամ սպիտակ կազմարարական ստվարաթուղթ (կարտոհ). նախորոք վորոշել բուսարկղի յերկարության ու լայնության չափսերը. յերկարությունը թող լինի—սովորական մատիտի յերկարության յերկուս ու կեսի չափով, տրամագիծը (խողովակի լայնությունը)—մատիտի  $\frac{3}{4}$  չափով. Ապա ստվարաթուղթը խողովակաձև պտտացնել, ապա յեզրերը մեկը մլուսի վրա դնել, հաստ ասեղով և կազմարարական ամուր թելով կարել. Մատիտով խողովակի վրա գծել խոռոչի տեղը՝ վոչ շատ մեծ և լայն (տես նկարի վրա): Այսուհետեւ ոռոր դանակով դրուշությամբ կտրել գծված տեղերը, միայն յերեք կողմից—ամբողջական գծերի ուղղությամբ (տես նկարի վրա). Իսկ մյուս, չորրորդ կողմից—կետավոր գծի ուղղությամբ խոռոչը մնում ե միացած. միայն հարկավոր ե խոռոչը դեպի դուրս ծալել: Խողովակի յերկու ծալրերին կպցնել ստվարաթղթի շըրջաններ. ոսլայի շրեշով կամ սոսինձով թղթի կտորներ կպցընել յեզրերին, վոր շրջանները խողովակի ծալրին լավ պահվեն (գործը և փորձը ինքը ցուց կատ, թե շրջաններն ինչպես կարելի լինի ավելի հարմար կպցնել):

Այժմ հարկավոր ե մի բան, վոր գուցե այնքան ել հեշտ չլինի գտնել: Յեթե տանն ունիք արդեն գործածությունից դուրս յեկած սեղանի մոմլաթ (կլենկա), կամ վորեւ շորի կրտոր—աշխատանքը հեշտությամբ կավարտվի. Մոմլաթը կամ շորը փաթթաթել խողովակի վրա, լավ նստեցնել և ապա յեզրերը կարել. հարկավոր ե այնպես անել, վոր մոմլաթը կամ շորի կտորը խողովակից յերկար լինեն, վոր հնարավոր լինի ծալրերին ծալել ու կարելով բուսարկղն ամեն կողմից պաշտպանել արել ճառագալմներից. չմոռանալ նաև կափարիչի

տեղն ևս կտրել ու ազատ կտորը յեզրերից կարել կափարիչն: Բուսարկղի յերկու ծալրերից կափարիչի ուղղությամբ կապել թել՝ բուսարկղն ուսով կախելու համար: (Տես քարտեղ 1. նկ. 3. ա. բ. գ.): Իհարկե, այդ ինքնաշեն բուսարկղի հետ պետք ե զգուց վարվել, նա անքան ել դիմացկուն չե. յեթե կարողացաք ունենալ թիթեղչա բուսարկղ—ավելի լավ կինի:

Բայց յեթե բուսարկղ չկարողացաք ունենալ, կարելի յեմի ուրիշ միջոցի դիմել: Բուսարկղն իր ձևով և չափով արդեն վորոշ անհարմարություն ե ներկայացնում եքսկուրսանտի համար. նա շատ հարմար ե այն դեպքում միայն, յերբ ցանկանում են բույսերը մի-յերկու որ թարմ պահել՝ այդ բուկսերի անունները հատուկ գրքերով, առասներով բնորոշելու համար. Թարմ բույսերը բնորոշելն ավելի հեշտ ե: Բուսարկղը պետք ե պահել ստվերալին տեղերում և միշտ պաշտպանել արկից:

Բայց բուսարկղի մեջ շատ բույս հավաքելն անկարելի յե. բույսերն իրար են խառնվում ու խճանվում, մանավանդ յերբ կան կպչուն, փշավոր և փաթաթվող բույսեր: Արմատների վրա եղած հողն ել կեղտոտում ե ծաղիկները. Իսկ ջրալին բուկսերն առավել ևս խառնգարում են: Բուսարկղն ավելի հարմար ե կարճատե եքսկուրսիաների համար. և տարբեր վայրերի բուկսերն իրար չպիտի խառնել. ցամաքի բույսերը չխառնել ջրալիների հետ, ծառերի ճյուղերն ու մամուռը՝ խոտաբույսերի հետ:

Հարմար ե պապկան. որինակ, վորեւ մեծ գրքի (որինակ, գրասենյակալին) կազմերը (տես քարտեղ 1. նկ. ե), կամ ել յերկու հավասար չափի ստվարաթղթեր. պապկալի մեջ դնել 30, 40 թերթ հատուկ թղթից (քամիչ թուղթ—ֆիլտրովальная бумага), ծալրահեղ դեպքում հին լրագրի թուղթ (վոչ փալուն), Պապկալի փոխարեն գործածում են հատուկ՝ այսպես կոչված—Ռումենսիերի մամուռ, վորը կազմված ե յերկաթա ցանցով ծածկված յերկու շրջանակներից (տես քարտ. 1.

նկ. դ): Այս մամուլը կարելի յէ պատրաստի ձեռք բերել: Ուստի մեսսլերի մամուլը շատ լավ է յերկարատե երսկուրսիալի միջոցին, վորովինետև մամուլի մեջ բուկսն սկսում ե չորանալ: Շրջանակները կապվում են թելով կամ կաշվե կապանով:

Սմեն անգամ բուկսը պոկելով՝ գնել թղթի վրա, նախապես ուղղելով տերեներն ու ծաղիկները: Սմեն մի բուկս պահել առանձին: յեթե բուկսը շատ յերկար է, մի կերպ ծալել յերկու կամ յերեք անգամ, իսկ յեթե ծալելիս կոտրվում է, կարելի յէ կարել յերկու մասի, բայց այդ գեպքում բոլոր մասերն ել թղթի վրա տեղափորել և բոլորի վրա ել համարակալած թուղթ ամրացնել:

Յեթե բուկսերը պապկալի մեջ եք դարսում, այդ գեպքում հարկավոր ե պապկալի յերեք ազատ յեզրերին թելեր ամրացնել – պապկան կապելու համար:

Վոչ բուսարկու, վոչ ել Ռոսմեսսլերի մամուլը, կամ հասրակ պապկան (բուսապանակը) ձեռքում չպահել, այլ թելեր հարմարեցնել և կախել ուսով: ձեռքերն եքսկուրսիալի ժամանակ ազատ պիտի լինեն: Զկախել միշտ մի կողմը, այլ յերբեմն աջ, յերբեմն ձախ՝ նայած թե վոր կողմն ե ստվերային:

Անհրաժեշտ ե նաև մի լավ դանակ՝ ծառերից, թփերից բուկսերը կտրելու համար: ինչպես նաև՝ փոքրիկ թիակ (բրիչ), բույսն արմատով հողից հանելու համար (այդ նպատակի համար ծախում են հատուկ թիակներ): Յեզ յեթե վերցնեք նաև մի խոշորացուց, հուշատերիկ և բառակուսի մասր թղթի կը տորներ – գուք արդեն լրիվ զինված կինեք: Խոշորացուցը նրա համար է, վոր հենց տեղում դիտեք պետք յեղածը, մանավանդ մանրիկ ծաղիկների կազմությունը: Հուշատերում անպատճառ պիտի գրեք հավաքած բուկսի մասին դիտողությունները ու տեղեկությունները: թե ինչ գրել, – այդ մասին կիսուենք մի փոքր հետո: Փոքրիկ թղթիկների վրա ամեն անգամ համարներ գրել ու կոճի բարակ թելով կապել քաղած և արդեն պապկալի մեջ տեղափորած բուկսին: Այդ նույն

համարի տակ, հուշատերում գրում եք բուկսի «կենսագրությունը»: Զմոռանաք հուշատերում նշանակել, թե զբոսանքի ժամանակ վոր ծաղիկը ի՞նչ տեղում գտնվեց: Հաճախ ե պատահում, վոր միենույն վայրում, բայց տարբեր պայմաններում տարբեր ծաղիկների յենք հանդիպում: Դաշտավայրում, անտառում, հովիտներում տարբեր տեսակի բուկսեր են և միենույն տեսակի բուկսեր, բայց վորոշ տարբերություններով: Ժայռոտ, քարքարոս տեղերում ել լինում են բուկսեր, սրանք ել ունեն իրենց առանձնահատկությունները: Բուկսերի վորոշ տեսակներ սիրում են արևալից, բաց տեղեր, մյուս մասը – սավելության տեղերը, յերրորդ մասը – խոնավ, ճահճալին: Ահա հենց այդպիսի տեղեկություններն ե, վոր չպիտի մոռանաք հուշատերում նախապես գրել: Գրել այսպես՝ «գտա անտառում, արտի մեջ, առվակի ափին, գետափին, ճահճոտում, ցամաք ու չոր տեղերում, բանջարանցում, մշակված հողի վրա, ժայռերի վրա, մութ տեղում, բարձր սարի վրա» և այն և այն: Հետաքրքրական ե գրել նաև, թե որվա վոր պահուն եր. այսպես՝ «առավոտյան, կեսորին, յերեկոյան»: Պատահում են այնպիսի բուկսեր, վորոնց ծաղիկները բացվում են ցերեկը, ու յերեկոյան դեմ փակվում են և ընդհակառակը – ցերեկը պահկաթերթիկները փակված են, իսկ յերեկոյան դեմ – բացված:

Հուշատերում գրել բուկսի անունը, յեթե չգիտեք՝ տեղեկացեք մոտակա բնակիչներից, թե այդ բուկսին ինչպես են անվանում: Նույնիսկ յեթե բուկսի խական անունն ել գիտեք, անհրաժեշտ ե տեղացիներից իմանալ նաև ժողովրդական անունը: Միաժամանակ տեղեկանալ, թե այս կամ այն բուկսը ինչո՞վ ե հետաքրքրական: Յեթե բուժարար բուկս ե, – իմանալ ի՞նչ հիվանդության դեմ են գործածում և ի՞նչպես. մի գուցե բուկսը գործ են ածում հում-հում, կամ կերակրի մեջ: Մի խոսքով՝ աշխատեցեք բուկսի ոգտակարության կամ վասակարության մասին, վորքան հնարավոր ե՝ շատ տեղեկություններ

հավաքել: Ահա այս բոլոր տեղեկութիւնները խնամքով կդրեք հուշատետրում: Ուրեմն բույսին կապում եք համարակալած թղթի կտորը, իսկ հուշատետրում նույն համարի տակ կդրեք բույսի նկարագիրը: Զմոռանաք հուշատետրում ամեն անգամ նշանակել նաև գյուղի, քաղաքի անունը, տարին, ամիսը և որը:

### 3. ԲՈՒՑՍԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԶՈՐԱՑՆԵԼ ՅԵՎ ՀԵՐԲԱՐԻՈՒՄ ԿԱԶՄԵԼ

Տուն վերադառնալուն պես, ամիջապես սկսեք բույսերը կարգի բերելու և չորացնելու աշխատանքը: Յեթե ձեռքի տակ ունեք հատուկ գրքեր, ատլամներ, չորացնելուց առաջ աշխատեցեք վորոշել (որություն) բույսը, իմանալ՝ ինչ ընտանիքից և տեսակից ե: Թարմ բույսերի վրա մասերն ավելի լավ են աշքի ընկնում ու դիտվում: Այժմ ձեր զենքը կինի խոշորացուցը, մետաղյա բռնիչը (պինցետ) և ասեղը—ծաղկի մանրիկ մասերն իրարից բաժանելու համար:

Բույսերի անուններն իմանալու համար կան հատուկ գրքեր (որություն), նկարներով ու ատլամներով: Նրանցով բույսի անունն իմանալը հեշտ է. դժբախտաբար այդպիսի գրքեր հայերեն լեզվով չկան. իսկ ուսւերեն—վորքան ուղենաք:

Յեթե ձեր ձեռքն ընկնի մի այդպիսի գիրք, դուք կարող եք գրքում բացատրած ձևով իմանալ տվյալ բույսի անունը: Այդ աշխատանքն անփորձի համար կարող ե յերկար տեսել, վորովհետև նման աշխատանքի համար հարկավոր ե բույսերի կազմության մասին վորոշ տեղեկութիւններ ունենալ. ուստի հարկավոր ե միենուխ բույսից գոնե յերեք որինակ հավաքել. մեկը—դիտելու, նկարագրելու և պատկերացարդ ատլասով ընտանիքը վորոշելու համար, իսկ մյուս որինակները—չորացնելու:

Վոշինչ, յեթե ծաղկի անունն իմանալու հնարավորութիւնն չունեք, միմիայն թե չորացնելիս չմոռանաք յուրաքանչյուր բույսի կողքին համարակալած թղթիկներ դնել:

Յերբ բույսերը բոլորովին կչորանան և արդեն իսկական հերբարիում կկազմեք, կարող եք հերբարիումը նույնիսկ առանց ճանապարհածախս վճարելու ուղարկել լենինգրադի կամ Մոսկվայի բուսաբանական պարտեզը, այնտեղ անունները կգրեն և ցետ կուղարկեն ձեզ: Այդպիսի գեպքում յուրաքանչյուր բույսից ուղարկեցներ յերկուական որինակ: մի որինակը կպահեն իրենց համար, իսկ մյուս որինակը—անուններով կուղարկեն ձեզ:

Այժմս տեսնենք, թե ինչպես պիտի բույսը չորացնեն: Չորացնող թուղթն այնպես պիտի լինի, վոր բույսի խոնավութիւնը լավ դուրս ծծի: Արդեն ասացինք, վոր ամենից լավը քամիչ թուղթն ե, նա թանգ չե և կարելի յե ձեռք բերել դեղատներում: Մամուլի փոխարեն կարելի յե վերցնել յերկուախտակ կամ հաստ ստվարաթուղթ, բայց այդ նպատակի համար ամենից լավը վերոհիշյալ Ռուսմեսուլերի մամուլն ե: Յեթե իրար վրա, թղթերի մեջ դարսված բույսերը յերկու կողմերից ծածկված լինեն ցանցապատ շրջանակներով, այդ գեպքում բույսերի խոնավութիւնն ավելի շուտ կանցնի և նրանք ավելի շուտ կչորանան: Թուլլ կապկապած մամուլն ել կարելի յե ամեն տեղ գնել—արևոտ, չոր տեղ կամ քամու տակ, միայն թե խոնավ տեղ չլինի: Նախ՝ տախտակը (ստվարաթուղթը կամ Ռուսմեսուլերի շրջանակը) դնում ենք հարթ տեղ, ապա մի քանի թերթ նույն չափի քամիչ թուղթ դարսում վրան: Եքսկուրսիոն բուսապանակից կամ բուսաբարկղից հանած բույսերը դասավորում ենք առանձին քամիչ թղթերի վրա: Ասենք՝ թե առաջին թերթն ե. դրա վրա դնում ենք բույսի մի տեսակը, իսկ յեթե մանր տեսակներ են, կարելի յե մի քանիմն իրար կողքի գնել. սակայն չկորցնել յուրաքանչյուրի համարը. բայց չպիտի մոռանալ, վոր վերջին գեպքում միանման հաստության բույսեր պիտի լինեն: Իհարկե, նախապես ուղղում եք բույսի բոլոր ծալված մասերը և նույն իսկ ավելորդ տերենները կտրում, յեթե խանգարում և իրար վրա յեն ընկնում: Այդ տերենները ձեռքով չպոկտել, այլ գուշությամբ կտրել դանակով կամ մկրատով այնպես, վոր կտրած տեղում հետք մնա: Աշխատել, վոր տերենները կամ ծաղիկներն

իրար վրա չընկնեն. ուղղել ծաղկի պսակաթերթիկները, աշխատել, վոր բոլորն ել բացված լինեն: Այդ կարող եք անել այսպես.—նույն թղթի մի փոքրիկ կտոր մի քանի անդամ ծաղկի վրա դնել և ձնշել այնքան, վոր ծաղկիլը բացված մնա, գոնե այնքան ժամանակ, մինչև վոր կարելի կլինի մեծ թղթով ծածկել դարսված բույսերը: Ծածկելու ժամանակ նայել, վոր տերեները կամ ծաղիկները չծալվեն: Ծածկում եք յերկրորդ թղթով և ապա այդ թղթի վրա մի քանի թերթ նորից դնում, ապա նույն ձեռվ դասավորում մյուս բույսերը և այն: Ուրեմն յուրաքանչյուր յերկու բույսերի արանքում անպատճառ մի քանի թերթ ազատ քամիչ թուղթ պիտի լինի: Իհարկե, հասկանալի յե, վոր թղթերը չոր պիտի լինեն. պապկայի մեջ յեղած արդեն խոնավ թղթերը չորացնելու համար իսկույն չողտագործել. հետագայում նույն, բայց արդեն չորացրած թղթերը, իհարկե, կարելի յե գործածել: Բույսերը դասավորելիս հաջորդաբար արձաների ուղղությունը փոխել, վոր ամբողջ փաթեթը չուռչի միայն մեկ կողմից:

Յեթե եքսկուրսիալի ժամանակ (մանավանդ յերկարատեև եքսկուրսիալի) բույսերը մի քիչ չորացրած լինեն և նրանց դըմքար լինի ուղղել, այդ դեպքում կարելի յե թարմացնել այսպես. — բույսերը շարել մի արկղի մեջ, վրան ջուր ցանել, թըրջած շորով ծածկել և մինչև մյուս առավոտ (կամ գոնե մի քանի ժամ) պահել զով տեղում:

Յեթե արձաների վրա շատ հող կա, արմատը խորասուզել ջրի մեջ և զգուշությամբ մաքրել: Յեթե բույսի մասերը հաստ և հյութալից են՝ իսկույն չդնել թղթի վրա (չորացնելու համար), այլ նախ մեկ կամ միքանի ըոպելով (նայած բույսին) պահել յեռացող ջրի մեջ, ապա հանել և քամիչ թղթով չորացնել. ապա նոր միայն դնել թղթի վրա, արդեն չորացնելու համար: Այսպես անհրաժեշտ ե անել նաև նրա համար, վոր բույսը չսկանա: Առհասարակ հարկավոր ե չորացնող թղթերը փոխել ամեն որ, իսկ հյութալից բույսերինը—որական յերկու անդամ:

Յերբ հավաքած բույսերը հաջորդաբար դարսեցիք թըրթերի վրա, ամենավերջին թղթի վրա մի քանի թերթ թուղթ ևս դրեք, ապա ծածկել յերկրորդ տախտակով (ստվարաթղթով կամ նոսմեսուլերի շրջանակով) և ահա չորացնող մամուլը պատրաստ ե. այժմ վրան մի քանի ծանր գրքեր կամ քարեր դրեք: Յեթե ձեզ մոտ նոսմեսուլերի մամուլ ե, այդ դեպքում բույսերը դասավորելուց հետո, շրջանակները կապկապել և մամուլը դնել կողքով չոր տեղ կամ հենց արևի տակ, (իհարկե, վոչ ուժեղ) և կամ քամու տակ: Մամուլի մեջ բույսերը պահել ամենաշատը յերկու որ. ապա բաց անել մամուլը, բույսերը նորից դասավորել նոր, չոր թղթերի վրա ու ելի մամուլի մեջ պահել: Յեթե բույսերից վորեն մեկն արդեն լավ չորացել ե, հանել և առանձին տեղ պահել, իսկ թե ինչ անել սրանց հետկասենը մի փոքր հետո. ամեն անգամ, յերբ բույսերը տեղափոխում եք նոր թղթերի վրա, ամենախոնավ բույսերը պահեք մամուլի արտաքին մասերում, վոր ավելի շուտ չորանան: Տեղափոխելիս միաժամանակ հետազոտել բույսերը՝ յեթե միջաներ հանդիպեն, — դուրս հանել, հնարավորության դեպքում ծալված տերեներն ու ծաղիկները նորից ուղղել:

Ընդհանրապես բույսերը լավ չորանում են 6—12 որվա ընթացքում, յերեմն ել՝ ավելի շուտ: Բույսի չորացած լինեն իմանում ենք այսպես. — յողունի ներքեմի ծայրից բոնում, բարձրացնում ենք, յեթե բույսը չծալվեց—ապա ուրեմն պատրաստ ե: Բավական ե, վոր բույսը կորցրել ե իր ձկունությունը—արդեն կարելի յե հաջորդ աշխատանքներին անցնել. այդ աշխատանքը ներքարիում կազմելի ե: Այժմ բույսերը պետք ե տեղափոխել իրենց մշտական տեղերը: Մշտական տեղերի համար կարելի յե գործածել հասարակ տեսակի սպիտակ թուղթ, կամ թե—իրեր փաթաթելու համար գործածվող մոխրագույն թուղթը, վորը անհամենատ ավելի աժան ե: Ուրեմն, բույսը դնում եք սովորական թղթի վրա, ապա թղթի բարակ ժապավեններով տեղ-տեղ կպցնում եք թղթի վրա (տես բարտեղ 1. նկ. 4. ա. բ. գ.). թղթի ժապավենները կպցնում եք միայն ծալրերից:

Յերբեք բուլսն ամբողջովին չկպցնել թղթին. վոմանը բույսի վրա ոսլայի շրեշ կամ սոսինձ են քսում, ապա կպցնում թղթին. անպայման խուսափել այդ ձեից. Անթուլատրելի յենակ բույսի թղթին կարելը. հաճախ արդպես են անում—կպցնող նյութ չունենալու պատճառով. Այդպես չանելու համար նախորոք ձեռք բերել «գումիարաբիկում», իսկ այդ չինելու դեպքում ոսլայի կամ ալյուրի շրեշ կարելի յե գործածել.

Յերբ բույսը, ինչպես հարկն ե, կպցրիք թղթի վրա՝ հատուկ քառակուսի փոքրիկ կտոր թղթի վրա գրեք հետևյալը՝  
1. Ի՞նչ ընտանիքից ե բուլս (իհարկե, յեթե կարողանաք իմանալ). 2. Նրա անունը—գիտական անունը—յեթե իմանաք, նաև հայերեն ու ժողովրդական անունը (այս վերջինը գրել հուշատերում). 3. Քաղաքը կամ գյուղը. 4. տարին, ամիսն ու թիվը. 5. Ի՞նչ տեղում (անտառում, դաշտում, ձորում և այլն). 6. Ներքեսում նշել, թե ով ե գտել: Բույսերը չխառնելու համար, ամեն մի թղթի վրա մի տեսակի բույս կպցնել: Բոլոր թղթերը պահում եք հատուկ պապկայի մեջ: Յեկ յերբ այդ բոլորն արդեն կատարված են, նոր դուք կարող եք ասել, վոր բույսերի իսկական հավաքածու, կամ ինչպես ասում են՝ հերբարիում ունեք: Հենց այդ պապկայի մեջ ել պահեցեք բույսերը: Յեթե շատ եք հավաքել, կունենաք մի քանի պապկա:

Լավ կլիներ, յեթե մի ավելորդ հերբարիում ել կազմեցիք ձեր դպրոցի թանգարանի համար. ձեր հերբարիումը հնարավորություն կտա բույսերի կանքի վերաբերյալ զրուցներն ավելի հետաքրքրական դարձնել: Հուշատերում գրած բոլոր տեղեկություններն ել հարկավոր կդան: Իզուր չեն գրում, թե հավաքած բույսերն ինչ վայրերում են գտնվում: Յերբ սկսում ես ուսումնասիրել այս կամ այն բույսի կազմությունը, նրա վրա տեսնում ես, թե նա ինչպես ե այս կամ այն բնական միջավայրին հարմարվել, թե ինչպես ե ալս կամ այն աննը-պաստ պայմաններից պաշտպանված: Բերեմ մի որինակ. — չոր ու ցամաք վայրերի բույսերի տերևները կամ փոքր ու բարակ են լինում և կամ ծածկված են լինում բազմաթիվ մազիկներով,

վորոնք բույսը պահպանում են ջրի ուժեղ գոլորշիացումից, Միևնույն տեսակի բույսերը տարբեր վայրերում յերբեմն ի-բարից շատ են տարբերվում. որինակ՝ խտուտիկը բաց տեղերում, ստվերախիտ անտառներում կամ բարձր լեռներում: Կարդալով հուշատերում արած գրությունները, ծանոթանում եք այս կամ այն ոգտակար բույսի հետ և իմանում, թե նա ինչ ոգուտ ե տալիս, ինչից բժշկում, և կամ ինչ վաս ե տալիս: Իհարկե, տեղեկություններն ստուգելու և բույսերի մանրամասն նկարագիրն իմանալու համար հարկավոր ե բույսերի մասին վորեւե գիրք կարդալ: Սովորաբար հերբարիումները կազմում են առանց ծրագրի. այսինքն—հավաքում են իրար յետեկից անսխատեմ, պատահական դասավորմամբ շարում մեկ պապկայի մեջ: Ավելի լավ ե ըիչ հավաքել, բայց լավ կազմած հերբարիում ունենալ: Հերբարիութերը պետք ե կազմել ըստ միջավայրի. որինակ՝ առանձին-առանձին պապկաներում — 1. դաշտային բույսեր, 2. անտառային բույսեր, 3. զեռնային բույսեր, 4. բանջարանոցային բույսեր, 5. գեղաբույսեր:

Ավելի ևս արժեքավոր են «բիոլոգիական» վոչված կոլեկցիաները. սրանք պատկերացնում են բույսի՝ այս կամ այն կենսական պայմաններին հարմարվելու միջոցներն ու ձևերը. որինակ՝

1. Զրի ուժեղ գոլորշիացումից պաշտպանվող բույսեր—ա) փետրախոտ (ковыль), բ) թրթնջուկ (кислица), գ) ասիրիկ (вереск) և ուրիշն.:

2. Բույսերի պաշտպանողական զենքերը—ա) յեղինջ, բ) տատասկափուշ (чертополох), գ) մոլեխինդ (дурман), դ) վարդ, ե) մասրենի, զ) ձորենի (барбарис) և ուրիշն.:

Կարելի յե կազմել և ախպիսի կոլեկցիաներ, վորոնք կը պատկերացնեն բուսական վորոշ տեսակներ, որինակ՝ 1. փշատերև բույսեր, 2. սպորատու բույսեր:

Նաև կարելի յե կազմել առանձին բույսերի լրիվ կոլեկցիա. որինակ—1. Մայրի ծառը, նրա ճյուղը առեջքավոր ծա-

զիկներով և վարսանդավոր ծաղիկներով, կոծիծ, սերմը, ծառիքնի լայնությամբ (հաստությամբ) և յերկարությամբ կտրվածքները (վերցնել մատղաշ ծառի ճյուղից), կեղեի կտոր (քառակուսի կտրած). — այս բոլորը թելով կամ մետաղե բարակ լարով կպցնել ստվարաթղթի վրա:

2. Փշատերեվ բույսեր. — ձիուղը, կոծիծը, սերմը. ա) սոճի (ոախտա), լեղենի, շամի, (մալրի), ցրտենի (можевельник).

3. Սպորատու բույսեր. — Պտեր, ձիաձետ, գետնամուշկ, մամուռ, սունկ:

Սունկը լավ, չոր պահելու համար անել այսպես. — յերկարությամբ կիսել, հանել միջուկը (միջին մասը) և արտաքին մասը պահել չոր տեղում: Սովորաբար սունկերը պահում են 70° սպիրուում. — իհարկե, այս ձևը բոլորի համար ել մատչելի չե: Առհասարակ սունկերի հավաքածու ունենայ այնքան ել հեշտ չի: Բայց գոնե այնպես պիտի անել, վոր ձեր հուշատետրում ուսումնասիրած տեղի սունկերի մասին ել տեղեկություններ լինեն: Շատ լավ կլինի, յեթե սունկը հասուկ տետրում նկարեք, իսկ յեթե կարողանաք ներկել և նկարը, գոնե մի քիչ բնական սունկին նմանեցնել — այդ հո մեծ աշխատանք կլինի:

Այս կամ այն բույսը լրիվ պատկերացնելու համար անհրաժեշտ ե հավաքել նաև սերմերը և պառուղը, յեթե միայն թղթի վրա տեղավորելու համար հարմար ե: Այդ գեպքում հարկավոր ե լավ հիշել այն վայրը, վորտեղից հավաքել եք այս կամ այն բույսը, վորպեսզի սերմի, պտղի առաջ գալու ժամանակ կարելի լինի գնալ հատկապես նրանց հավաքելու համար: Հերքարիութի մեջ սերմերը չկպցնել, այլ պահել փոքրիկ ծրարների կամ փաթեթների մեջ, իսկ այդ, իհարկե, համարակալած փաթեթները սովորական ձևով (թղթի նեղ ժապավենով) կպցնել բույսերի կողքին և կամ, յեթե սերմերն ու պտուղները խոշոր են — պահել մի առանձին արկղիկում:

#### 4. Ֆենոլոգիական Դիտումներ Յեկ չԱվաբԱ- ՇՈՒՆԵՐ

Բույսերի կյանքը լավ ուսումնասիրելու համար անհրաժեշտ ե նրանց դիտել տարվա ընթացքում, հատկապես՝ զարնանը, ամռանը և աշնանը:

Գարնան սկզբից պիտի նկատի առնել վորոշ բույսեր և դիտել ամեն որ. հենց վոր վորևէ փոփոխություն նկատվեց, գրի առնել անմիջապես: Այդ բավական չե, — վորպես ապացուց պիտի պոկել բույսի այն մասը, վորն իր փոփոխությամբ աչքի ընկավ: Անհրաժեշտ ե ունենալ մի հատուկ տետր, վորի մեջ կպերք ձեր դիտողությունները. և այդ կանեք, որինակ, այսպես. — 1. Յերբ սկսեց կանաչել ծառը (կամ մի շարք ծառեր): այդ այն ժամանակին ե, յերբ տերեները բողբոջների միջից քիչ դուրս են ցցվում. 2. Յերբ հալտնվեցին ու բացվեցին տերեները. 3. Յերբ հալտնվեցին ծաղիկները. 4. Յերբ թափվեցին ծաղիկների պսակաթերթիկները. 5) Յերբ պտուղներ առաջ յեկան:

Լավ կլինի ընտրել մի վորևէ պտղատու ծառ (ձեր բակում կամ այնպիսի տեղ, վոր կարողանաք գնալ տեսնել) և հատկապես հետեւ նրա կլանքին: Յենթադրենք, թե ընտրեցիք խնձորենին կամ ծիրանը: Դիտողությունները պիտի սկսել վաղ գարնանը, յերբ բույսի վրա բողբոջները նոր են սկսում նկատվել, և կանոնավորապես հետեւ մինչև աշնան վերջը, յերբ տերեները թափվում պրծնում են: Այդ դիտողությունները վոչ միայն գրի առնել հուշատետրում և նկարել, այլ և միաժամանակ կազմել կոլեկցիա: Սկզբում կտրել փոքրիկ ճյուղ միքանի բողբոջներով և վրան ժամանակավորապես համարակալած թուղթ կպցնել, իսկ տետրում գրել, թե յերբ պոկեցիք: Հետեւ ամեն որ, կամ որը մեջ. յեթե ծառի բողբոջների վրա փոփոխություններ նկատվեն, որինակ, ուռչեն, թեթև բացվեն, կամ բուրովին բացվեն, պետք ե պոկել նոր ճյուղը: Այնուհետև դիտել տերեների աճման ընթացքը — պոկել զանազան շափերի տե-

գեներ (մինչև բնական չափը հասնելը): Այսն անգամ չմոռանալ համարակալել և տեսրում գրել ամսաթիվը: Աչքից բաց շթողնել նաև ծաղկի բողբոջների բացվելը—ծառի ծաղկելը: Պոկել ծաղկավոր ճյուղը, և ապա դիտել, թե պսակաթերթիկները յերբ են թափում, թե յերբ ե սերմնատունն ուռչում և պտուղն սկսում ե առաջ գալ—նախ կանաչ, ապա աստիճանաբար բոլորովին հասունացած: Աշնանը հետեւ տերեների դունափությանը և նրանց թափվելուն որե-որ՝ ինչպես են նրանք թափում—մաս-մաս, ամբողջովին. յերբ ե բոլորովին ծառը մերկանում: Այս բոլոր դիտողությունները լրիվ կպատկերացնեն բույսի կանքը: Ինչ վոր հավաքել ու համարակալել եք, սովորական ձեռվ ժամանակագրական կարգով կպցրեք մեծ ստվարաթղթի վրա և ամեն մեկի տակ գրում եք ամիսն ու ամսաթիվը, իսկ ընդհանուր տախտակի վրա նշանակում եք դիտողության տարեթիվը: Այս կոլեկցիայի համար—բուսական մասերը, մանավանդ՝ ծաղիկներն ու տերեները նախորդ պետք ե չորացնել: (Տես ցուցահանդեսի նկարը):

Այսպիսով կստանաք հետաքրքիր կոլեկցիա, վորի վերասպառ կինի այսպես,—«Ծիրանի զարգացումը», «Խնձորի զարգացումը» և այլն: Յեթե միաժամանակ հետեւ նաև յեղանակներին ու այդ ել հաջորդաբար հատուկ որագրում գրի առնեք՝ ավելի պարզ կինեն բույսի ուշ կամ վաղ տերենելու կամ ծաղկելու պատճառները<sup>1</sup>:

## 5. ԱՊԱԿԵԾԱԾԿ ԲՈՒԽԱԲԱՆԱԿԱՆ ԿՈԼԵԿՑԻԱՆԵՐ

Աչքի ընկնող բույսերը, մանավանդ նրանց գեղեցիկ ծաղիկները, մշտական դիտողության համար արժե զետեղել ապակեծածկ շրջանակներում, յեթե միայն դրանք չորացած մի-

<sup>1</sup> Թե ինչպես մանրամասն ողերեւութաբանական և ֆենոլոգիական (ավելի լայն չափով) դիտողություններ անել,—այդ մասին տես Թավառագիտական ընկ. հրատարակությունները:

ճակում բարակ են: Այդ պետք ե անել այսպես.—ծաղիկն իր ծաղկեկոթով, առանց թերթիկների, թեթև կերպով կպցնել ըստ-վարաթղթի վրա և ապա վրան ապակին քաշել. իհարկե, նաև ապա վորպես ֆոն ստվարաթղթի վրա պիտի քաշել վորմեկունավոր թուղթ: Գունավոր թուղթն ել պիտի ընտրել այնպիսի գույնի, վոր վոչ միայն շթուլացնի ծաղկի տեսքը, այլ ավելի ցայտուն դարձնի: Որինակ՝ պայծառ ծաղիկները սև ֆոնի վրա շատ գեղեցիկ են դուրս գալիս: Ֆոնի ընտրությունը բնասերի ճաշակին ե թողնվում: Ստվարաթղթի չափսով ապակին ծաղկի վրա դնելուց հետո, ապակու և ստվարաթղթի չորս կողմերը (նեղ շերտով) սև կամ այլ գույնի թղթի ժապավեն կպցնել: Այդպիսի կոլեկցիաների համար կարելի յէ ոգտագործել լուսանկարչական հին, արդեն անգործադրելի ապակիները<sup>1</sup>:

Ավելի մեծ ապակիների տակ կարելի յէ մի քանի ծաղիկներ կպցնել, բայց այդպիսի կոլեկցիան պատահական ծաղիկներից չպիտի կազմել. այլ պիտի աշխատել մի վորմեկ ընդհանուր յերեսուլթ ցուցաբերել: Որինակ՝ «միջատներով փոշոտվող ծաղիկներ», «ծաղկեպսակների ձեռը», «առեջների ձեռը», «ինքնափոշոտվող ծաղիկներ», «քամու միջոցով փոշոտվող ծաղիկներ» և այլն: Հասկանալի յէ, վոր այսպիսի կոլեկցիայի համար պիտի վերցնել միատեսակ հաստություն ունեցող ծաղիկներ:

Նման կոլեկցիաներ կարելի յէ բույսերի այլ մասերից ևս կազմել:

● Կազմել հետեւալ կոլեկցիաները.

1. Քամու միջոցով տարածվող սերմեր (ընտրել հավասար հաստության սերմեր):

<sup>1</sup> Ապակու վրայի սև շերտը պիտի հանել այսպես.—ապակին վորմեկ մասակ պահել ջրի մեջ, վորից հետո թաղանթանման շերտը հեշտությամբ քերվում և հաճախ նույնիսկ ամբողջապես վրայից հանգում ե:

2. Տերեների ձեւը:

3. Տերեների նյարդերը. այս կոլեկցիայի համար տերեներ կարող եք գտնել աշնանը՝ թափթփված տերեների մեջ. կարելի յե արվեստական ձեռվ ևս պատրաստել. պատրաստել այսպես.— տերեր դնել հարթ տեղ, ապա հագուստի խողանակով խփել վրան այնքան, վոր կանաչ մասերը հանվեն և մնա միայն նյարդացանցը:

4. Տերեների աշնանային գունափոխությունը, աստիճանական գունափոխությունը՝ սկսած կանաչից մինչև մաքուր դեղինը:

5. Զրի ուժեղ գոլորշիացումից պաշտպանվող բույսեր (մաղածածկ տերեներ, նեղ տերեներ):

Բազմատեսակ ապակեծածկ կոլեկցիաներ կարելի յե կազմել. միայն թե դրանց համար զգալի ծախս ե պահանջվում, հարկավոր ե ապակի գնել. բայց կարելի յե ոգտագործել ուղիղ լեզրով նաև հին ապակիները. Յեթե մտադրություն կա թանգարանի համար արդպիսի կոլեկցիա կազմել՝ գերազասելի յե պատրաստել վոչ շատ փոքր. Բացի բույսի մասերից, կարելի յե ցուցադրել նաև ամբողջական բույսեր, ինը կե, յեթե ընտրած բույսերն իրենց կամքով հետաքրքրական են և մեզ համար մեծ արժեք ունեն. ուստի և անհրաժեշտ ե, վոր արդպիսիները շարունակ աչքի առաջ ունենանք և լավ հիշենք. Շատ շատերը չգիտեն, թե իրենց գավառում ի՞նչ մեղքաբույսեր կամ ուրիշ արժեքավոր բույսեր կան:

Կարելի յե կազմել կոլեկցիաներ.

1. Մեղքաբույսերի.
2. Բուժարար բույսերի.
3. Թունավոր բույսերի.
4. Ներկատու բույսերի (վորոնցից ներկեր են պատրաստում).
5. Պտղատու ծառերի ծաղիկների և ալն և ալն.

Շատերը կմտածեն՝ թե ի՞նչ նշանակություն ունեն ապակեծածկ կոլեկցիաները, քանի վոր հենց նույն բույսերի հերքարիում արդեն պիտի ունենանք: Ապակեծածկ մեծ կոլեկցիաների նշանակությունը կայանում է նրանում, վոր նրանց հաճախ կարելի յե ոգտագործել դասարանում, զրուցների, դասախոսությունների ժամանակ և վերջապես մշտապես կարելի յե թանգարանում բոլորի աչքի առաջ կախած պահել: Հերբարիումից վեցրած բույսերը հաճախ արդպիսի նպատակների համար չեն կարելի գործածել—հարմար և դիմացկուն չեն: Բայց չկարծեք, թե ավելի լավ ե բոլոր բույսերն ապակեծածկ պահել, ամենակին, կարիք չկա: Յերբ ցանկանում եք բույսի կյանքից վորեւեք աչքի ընկնող և մեծ նշանակություն ունեցող լեզրենությունը ապագարերել և դրա վրա հաճախ ուրիշների ուշադրությունը գրավել,—այդ գեպքում միայն արժե ապակեծածկ կոլեկցիաներ ունենալ: Ստվարաթղթի վրա կպցնել նեղ, ամուր շորի կտորից մի ականջիկ—կոլեկցիան պատից կախելու համար, արևի դիմաց չկախել, վորովհետեւ բույսի գույները կթուլանան:

Վերոհիշյալ ձեռվ կարելի յե պատրաստել նաև բույսերի սերմերի կոլեկցիա—մեկ կամ միքանի բույսերի: Այս կոլեկցիաների համար կարելի յե ոգտագործել տարբեր չափի ապակիներ:

Պատրաստել այսպես.—կտրել վորոշ մեծության ստվարաթուղթ (մեծությունը վորոշել ըստ սերմերի տեսակների—մի տեսակի գեպքում կտրել վորը, իսկ միքանիսի գեպքում՝ մեծ), դրա վրա կպցնել գարձալ ստվարաթղթից կտրած շրջանակներ կամ քառակուսիներ—նայած ցանկության ու գեղեցկության, յեթե սերմերը խոշոր են, այդ գեպքում այդ շրջանակները, կամ քառակուսիներն անել մի քանի շերտից, այնքան, վոր սերմերը շրջանակից դուրս չմնան: Ապա բոլոր այդ շրջանակները շերտ-շերտ լացնում եք հիմնական ստվարաթղթին, ապա ստացված փոսերը լցնում եք սերմերով: Սերմերը շարել կանոնավոր շարքերով կամ շրջանակներով: Սերմերը

կպցնելու համար կարելի յէ գործածել՝ գումիարաբիկում, ոս-  
լալի կամ ալլուրի շրեշներ: Յերբ սերմերը դարսեցիք, պլծաք,  
ծածկեցեք ստվարաթղթի մեծության ապակիով. դրանից հե-  
տո կողքերին կպցնել թղթի ժապավեններ և կամ թե, հիմնա-  
կան ստվարաթղթի տակով կպցրած թաթի յեզրերը ծալել ա-  
պակու վրա (տես քարտեզ 3, նկ. ա, բ):

Մի քիչ դժվար ե խմբական կոլեկցիա կազմելը: Դրա հա-  
մար վերցնում եք մի հիմնական ստվարաթուղթ. մի ուրիշ  
նույն չափի ստվարաթղթի վրա կտրում եք այնքան շրջաններ,  
վորքան տեսակի սերմեր ունեք. ապա այս շերտը կպցնում եք  
հիմնականի վրա: Յեթե սերմերը, թեկուղ միքանի տեսակները:  
խոշոր են, այդ դեպքում յերկրորդ ձեր ստվարաթղթից (բոլո-  
րովին նման կտրվածքներով) միքանի շերտ կպցնում եք ի-  
րար վրա, մի խոռով՝ այնպես պիտի անեք, վոր տվյալ սեր-  
մերի ամենախոշոր տեսակները ստվարաթղթի մակերեսից բարձր  
չլինեն: Աշխատեք ըստ հնարավորության համաչափ մեծության  
սերմեր ընարել: Ապա ապակին դնել ու կպցնել ստվարաթղթին:


Նման կոլեկցիաներ կազմելու ավելի հասարակ ու հեշտ  
ձեր առանց ապակու պատրաստելն ե. այս դեպքում, սերմերը  
բաց են: Այս կոլեկցիայի պակասությունը կայանում ե նրա-  
նում, վոր նախ՝ սերմերը փոշոտվում են, զանազան միջատնե-  
րից չեն պաշտպանված և ապա, յեթե լավ կպցրած չեն, — առ-  
տիճանաբար թափվում են:

Պատահական կոլեկցիաներ կազմելուց պիտի խուսափել:  
Սերմերն այնպես համախմբել, վոր ելի մի ընդհանուր նպա-  
տակ ինկատի առնվի: Որինակ, կարելի յէ կազմել սերմերի կո-  
լեկցիաներ հետևյալ համախմբումներով՝

1. Հացաբույսերի սերմեր:
2. Յուղ տվող սերմեր:

3. Բուժարաբ բույսերի սերմեր:
  4. Դեկորատիվ բույսերի սերմեր:
  5. Բանջարեղենի սերմեր:
  6. Մրգերի սերմեր:
  7. Թունավոր բույսերի սերմեր:
  8. Տեխնիկական բույսերի սերմեր:
- Իհարկե, հնարավոր ե ուրիշ համախմբումներ ևս կազմել:

Քարտ 2



Քարտ 2.

Ի՞նչ պիտի ունենալ և անել՝ միջամների կողեկցիա կազմելու  
համար:

Նկարներ—1. ա.—ինչպէս պատրաստել ցանցի ողակը (լեռկաթե  
լարից). բ.—ողակի սրած ծայրերը փայտին խփված և թելով ամուր  
կապված: 2. Ցանց. ա.—լավ պատրաստված ցանց, բ.—սխալ պատ-  
րաստված ցանց: 3. Մեղքնող անոթներ. ա.—լեթերով ծծված բամ-  
բակով անոթներ—բամբակը խողովակներում (դրսի ծալրը փակ,  
կամ խցանով ծածկված) կամ գնդասեղով խցանին ամրացրած. բ.—խը-  
ցան—գնդասեղով ամբացրած բամբակով. 4. Բունիչ (պինցետ). 5. Դա-  
շակ. 6. Թիւակ. 7. Ինչպէս գնդասեղել բզեզին. 8. Ինչպէս գնդասե-  
ղել տարբեր ձեւերի բզեզներին. ա.—աջ վերնաթերից, բ.—կրծքից, գ.—  
վահանիկից. 9. Մանր միջամներ—գորոնց անհնարին և գնդասեղել—  
լեռկու դիրքով՝ փորի և մեջքի վրա, կպցրած թղթին. 10. Թիւուղղիչի  
վրա ինչպես ուղղել թիթեռի թեւերը. 11. Հասարակ ինքնաշեն թեւուղ-  
ղիչ. 12. Մեղքրած թիթեռներին ինչպես տեղափոխել թղթի փաթեթներով.  
ա.—քառակուսին ինչպես ծալծիլ փաթեթն ստանալու համար և թիթեռը  
վժը լեռանկան մեջ տեղափորել. բ.—փաթեթը ինչպես ծալել ու փակել  
վիրեհ քառակուսին. 13. ա.—պարզ ձեւի բացված փաթեթ թիթեռով.  
բ.—փակված փաթեթ (պարզ ձեւի):

## II. ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԿՈԼԵԿՑԻԱՆԵՐ

### 1. ՄԱԶԱՏՆԵՐ ԻՆՊԵՍ ՀԱՎԱՔԵԼ

Միջատներ հավաքելու համար ի՞նչ և հարկավոր ունենալ՝ նաև՝ ամենագլխավորը—ցանց։ Ոդային միջատներ բռնելու համար ցանց կարելի յէ պատրաստել՝ մարմաշից (կույա), սյուլիցիսկ գետնի վրա լեղած միջատներին հավաքելու համար ավելի ամուր, դիմացկուն կտոր և հարկավոր։ որինակ՝ բարան, կոլենիոր։ Զրային կենդանիների համար—նույնպես դիմացկուն կտորից և պետք, բայց ծակոտիներ ունեցող ( $1 - 1\frac{1}{5}$  միլիմետրամագծով), վոր ջուրը ցանցի մեջ չմնա։ Ցանցը կարում են տոպրակի ձեռվ, բայց տոպրակն աստիճանաբար ծալրում նեղանում ե։ Միայն շատ չնեղացնել և սրածայր չանիել, թե չե բռնելու ժամանակ միջատն ընկնում և ցանցի ծալրը և դժվար ե լինում նրան բոլորովին անվնաս դուրս հանել, մասնակի թոչող միջատներին (տես քարտ 2, նկ. 2 ա, բ.)։

Այսուհետև մետաղե լարից մի շրջան շինել, յերկու ծալրից ավելորդ մասեր թողնելով. այդ ավելորդ մասերը ծռել դեպի դուրս և ամուր թելով ամրացնել մի յերկար ու բարակ փայտի ծալրին։ Լավ կլինի, յեթե լարերի ծալրերը խարտոցով սրեք, ապա քիչ ծռելով՝ ներս խփեք փայտի մեջ ու այնպես կապեք, վոր շրջանն անշարժ նստի փայտի ծալրին (տես քարտ 2, նկ. 1)։

Ցանցի համար վերցրած ձողի յերկարության ընտրությունը թողնվում է յուրաքանչյուրին, ըստ յուր հարմարության։ Համենայն դեպս պիտի լինի վոչ շատ յերկար, վոչ ել շատ կարճ։ Միայն թե ջրային կենդանիների համար պատրաստված ցանցի ձողը համեմատաբար յերկար պիտի լինի—վոչ պակաս 1 մետր 30 սանտիմետր։ Զողի փայտը պիտի լինի ամուր, վոչ ձկուն և վոչ ել հաստ։

Ինչպես ասացինք, թոչող միջատներին, մասնակի թիթեռներին պիտի բռնել մարմաշի ցանցով։

Զպիտի մոռանալ, վոր անթիվ միջատներ վխտում են նաև գետնի վրա—խոտերի մեջ։ Յերբեմն նրանց տեսնելը շատ գժվար ե, բայց նրանց հնարավոր ե բռնել, նույնիսկ առանց տեսնելու։ Այսպիսի գեպքերում պիտի ունենալ ամուր կտորից շինած ցանց։ Թե ինչպես պիտի վարվել այս ցանցի հետ, կը-տեսնենք հետո։ միայն իմացեք, վոր այդ ցանցը շարունակ պիտի քաշել գետնին քսելով, այդ պատճառով ել շարունակ բույսերին ու քարերին խփելով իսկույն կփչանա և կանպետքանա, յեթե մարմաշից շինված լինի. ուստի այս նպատակի համար շինված ցանցերը պատրաստում են քաթանից կամ կոլենկորից։ Նրա մետաղե լարն ել, փայտն ել ավելի հաստ և ամուր պիտի լինեն։

Շարունակենք անհրաժեշտ իրերի նկարագրությունը տալ։

Հարկավոր ե լայնքերան ապակյա բանկա։ Զեռքերն ազատ պահելու համար, բանկան թելով պիտի կապել և կախել ուսով, կամ ամրացնել գոտուն, կամ թե չե՝ պահել եքսկուլպիոն պարկում, յեթե այդպիսին ունեք։ Բանկան ծածկել ծակ խցանով, վորի միջով անցկացնել փոքրիկ ու նեղ փորձանոթ՝ քերանը դեպի ցած ուղղած։ Յեթե այդքան փոքրիկ փորձանոթ չկարողացաք գտնել, վերցրեք ապակե լայն խողովակ, կտրեք այնպիսի յերկարությամբ, վոր խցանի ներսից յերկու սանտիմետրով դուրս ցցված լինի, իսկ դրսից—մեկ սանտիմետրը բավական ե։ Դրսի ծալրը ամուր ծածկեք խցանով։ իսկ խողովակի կամ փորձանոթի ներսի կողմը մտցնել բամբակ—վրան յեթեր կամ քլորոֆորմ կաթեցրած։ Յեթերով միջատներին ընդմիշտ քնացնում են. յեթե սրանք դեռ շարժվում են, կնշանակի բամբակը ցամաքած ե, ուրեմն վրան ելի յեթեր պիտի կաթեցնել։ Եքսկուրսիոն պարկում մի փոքրիկ սրվակով յեթեր միշտ պիտի ունենալ։ Յեթերը հեղուկ ե և վաճառվում ե դեղաներում. սովորաբար առանց բժշկի բեցեպտի չեն տալիս։ Կարելի կլինի ձեռք բերել կամ ծանոթ բժշկի և կամ դպրոցի վարչության միջոցով։ Յեթերի սրվակը կրակից

հեռու պահեք և բերանը միշտ ծածկեք, թե չե՛ կգազանա. հոս  
չառնեք—կթմրեք. Յեթերի փոխարեն ավելի ուժեղ հեղուկ—  
քլորոֆորն ևս կարելի յե գործածել. բայց սրա ձեռք բերելը  
շատ դժվար է.

Մի բան չմոռանաք. — մեռցնող բանկալի (հեղձարանի) մեջ  
յերբեք միջատների վրա յեթեր չկաթեցնեք, կամ թեկուզ յե-  
թերով ծծված բամբակ ել չզցեք, վորովինետև դրանից մի-  
ջատները, մանավանդ թիթեռները կվնասվեն: Յեթե յեթերը  
թուլացել ե, բաց արեք մեռցնող բանկան, խցանին ամրաց-  
րած խողովակի կամ փոքրիկ փորձանոթի մեջ յեղած և կամ  
թե հենց բորոցով խցանից կախված բամբակի վրա մի քանի  
կաթիլ յեթեր ածեք և բանկան անմիջապես կրկին փակեք: (Տես բարտ 2. նկ. 3. ա. բ.)

Յեթերից միջատները նախ թմրում, ապա սատկում են. յեթե տեսնեք, վոր չի ներգործում—բամբակի վրա նորից յեթեր կաթեցրեք:

Նքսկուրսիա գնալիս վերցը եք նաև արկղիկներ (թե կուզ դա-  
նակների), բամբակ, թղթից կարած քառակուսիներ, իսկ թե  
ինչու համար - կասեմ հետո. Յերբ համողվեք, վոր բանկայում  
միջատներն արդեն ընդմիշտ անշնչացել են, հանեք, տեղափո-  
րեք արկղներում մի շերտ բամբակի վրա -միմյանցից հեռու-հեռու,  
վոր իրար չկպչին: Դարսված միջատների վրալից ելի մի շերտ  
բամբակ փռեք: Յեթե արկղը խորն ե, կարելի կլինի նրա մեջ  
մի քանի շերտ միջատներ դարսել, իհարկե, շերտերը միմյան-  
ցից անպայման բամբակով բաժանված պիտի լինեն: Մեղքնող  
բանկայում միջատներին յերկար չպահել. սատկածներին իսկույն  
պիտի հանել: Այդպիսի բանկաներից յերկուսը պիտի ունենալ.  
մեկը - բգեզների և առհասարակ կարծը, կոշտ միջատների հա-  
մար, իսկ մյուսը - թիթեռների և նուրբ միջատների համար:  
Այդ պիտի անել նրա համար, վոր կոշտ բգեզները մինչև սատ-  
կելը, կամ բանկալի շարժման ժամանակ թիթեռների նուրբ  
փոշեծածկ թերը չպատճեն:

Վերոհիշալ արկղները և առհասարակ եքսկուրսիոն իրերը պիտի պահել հատուկ «Եքսկուրսիոն պարկում», վորպեսզի գոնենե ձեռքբերից մեկը ազատ լինի՝ մեկ ձեռքը մշտապես զբաղված կլինի ցանցով:

Միջատներ հավաքելու համար թե ուրիշ ել բնչ իրեր են  
հարկավոր, կթվեծ քիչ հետո:

## 2. ՄԻԶԱՏԵՐԻ ՎՈՐՍԼ

Թուչող միջատներին և մանավանդ թիթեռներին ի՞նչպես  
բռնել. — յերբեք չշտապել — և թիթեռի յետերից չվագել թեկուզ ա-  
րագ, հակալական շքալել. Յերբ յերևաց թիթեռը, ցանցը  
քիչ բարձր պատրաստ պահած՝ նետենք նրան։ Հանգիստ, առանց  
աղմուկի մոտեցեք և հաջող, հարմար ըռպակելին ցանցը վայր-  
կենապես դցեք վրան։ Նույնիսկ, յեթե մեկ-յերկու անգամ  
չհաջողվի բռնել, նորից հետապնդել պետք չե, ջղախնացած այս  
ու այն կողմ չվագել։ Ավելի լավ ե թողնել, վոր գետնի կամ  
բուշի վրա նստի։ Ապա զգուշությամբ, անձան մոտեցեք.  
միայն չմոռամալ՝ այնպես մոտենալ, վոր ձեր ստվերը չընկնի  
միջատի վրա, թե չե՞նա լույսի փոփոխությունն զգալով, իս-  
կույն կթուչի։ Հենց վոր արագ շարժումով ցանցը գցեցիք մի-  
ջատի վրա, իսկույն ցանցն այնպես շուռ տվեք, վոր ծայրը  
մի քիչ փաթաթվի և մետաղե շրջանի վրա ընկնի։ այդպիսով  
միջատին դուքս ծլկվելու հնարավորությունից կգրկեք։

Հիմա տեսնենք, թե միջատներին ցանցից ինչպես պիտի հանել. — ձեռքով ցանցի միջատից վեր յեղած մասը հագաքել և ցանցը սեղմելով ձեռքն իջեցնել անպես, վոր թիթեռը դեպի ցանցի ծայրը քաշվի. այնուհետև մլուս ձեռքով թիթեռին զգուշությամբ բռնել անպայման յերկու թևերից միասին, հակառակ դեպքում մլուս ազատ թևի թափահարելուց թևերի վրա յեղած գունավոր ծաղկեփոշին և թեփուկները կթափվեն, և թևերի գեղեցկությունը կկորչի. Բռնած թիթեռին անմիջապես գցեք մեռցնող բանկայի մեջ: Յեթե բանկայի մեջ շարու-

նակեց թևերը յերկար ժամանակ թափահարել, կոշանակի յեթերը թուլացել ե, անհրաժեշտ ե ուժեղացնել:

Մեծ թվով միջատներ կան նաև խոտերի մեջ, գետնի վրա: Բոլորիդ հետ ել պատահած կլինի, վոր յերբ անցնում եք անտառով, նայում բույսերին, գետնին, բայց վոչինչ չեք տեսնում: Ձեզ թվում ե, թե վոչինչ չկա, և ձեր եքսկուրսիան անհետաքրքիր ե դառնում: Ինձ հետ ել այդպիսի դեպքեր պատահել են—յերբ փոքր ելի: Յերբ թիթեռ կամ բզեզ չելին հանդիպում—հուսահատվում ելի ու գանգատվում, թե վոչինչ չկա: Հետագայում, յերբ հավաքելու կանոնները մի քիչ սովորեցի, յերբ եքսկուրսիայի դուրս յեկա անհրաժեշտ իրերով զինված, այն ժամանակ միայն իսկապես հասկացա, թե սկըզբներում վորքան սխալված ելի: Կան, և շատ բաներ կան, բայց անտեղակի աչքերը չեն տեսնում: Մենք չենք տեսնում և չենք զգում, թե խոտերի մեջ վորքան միջատներ են թագնված: Այդ վորպեսզի իմանանք, մենք պետք ե յերկրորդ տեսակի, կոշտ ցանցը գործածենք: Յանցը կիսաբաց ամուր սեղմելով քսել գետնին, կամ ավելի ճիշտ գետնի, կարճ խոտերի ու տունկերի վրայով «քշել» այնպես, վոր կարծես խոտն ուզում եք հնձել: Այս ցանցի կոթը պետք ե լինի մինչև 2 արշին, վորը պիտի բանել աջ ձեռքով, ապա գետնին քսելով, արագությամբ շարժել աջ ու ձախ: Իհարկե, ցանցի մեջ բավականաշափ բույսեր ել կընկնեն բայց այդ վոչինչ: Յանցից միջատներին հանել ելի այնպես, ինչպես նկարագրեցինք փափուկ ցանցինկատմամբ. կամ թե ավելի լավ ե՝ այնպես.—յերբ ձեռքովցանցը հավաքելով կսեղմեք, ներսից մի փոքր անցք բաց արեք և դրա տակ պահեք բաց արած մեսցնող բանկան. այդ անցքով ցանցից միջատները կողան դեպի բանկան: Յեթե միջատները խոշոր են և նրանց ցանցի մեջ լավ տեսնում եք, կարելի յեւ մատներով բռնել:

Վորսից հետո ցանցը մաքրել բույսերից ու ելի փորձել: Այդ ձեռք բավականաշափ միջատներ են բռնվում: Նորից եմ

կրկնում՝ չմոռանաք փափուկ և նուրբ միջատներին կոշտ տեսակներից առանձնացնել. այդ աշխատանքը դուք կարող եք կատարել բռնիչով (պինցետ), վորով զգուշությամբ կընեք միջատին և կտեղավորեք ուր հարկն ե: Հաճախ ցանցի մեջ կընկնեն շատ մանր միջատներ. բնասերն այդպիսիներից չպիտի հրաժարվի—վերցրեք բոլորն ել:

Մեռցնող բանկաներում (հեղձարանում) արդեն սատկած միջատներին յերկար չպահել. այդպիսիներին ժամանակ առ ժամանակ պիտի տեղափոխել հատուկ տուփերի մեջ և արդեն ասած ձեռք (բամբակի շերտերով) տեղափորել: Սատկած թիթեռներին նախքան վորես արկղի մեջ դնելը, պետք ե տեղափորել ուղղանկյուն թղթից պատրաստած փաթեթների մեջ: Այդ փաթեթները պիտի պատրաստել այսպես.—թղթից կտրել ուղղանկյունիներ (տետրակի թղթի քառորդ մասի մեծությամբ): Այդ թղթի վրա մատիտով յերկու այնպիսի գծեր քաշել (յերկար կողմերը միացնող), վոր թղթի միջին մասում քառակուսիներ, իսկ կողքերում՝ նեղ ուղղանկյունիներ կազմվեն (տեսքարտ 2. նկ. 12, 13):

Այժմ քառակուսին ծալեք այնպես, վոր յերկու հավասար յեռանկյունիներ ստացվեն: Մեկ յեռանկյունու վրա դնել թիթեռին—թևերն իրար վրա ծալած, իսկ մյուս յեռանկյունով ծածկել. ապա ծալել նաև յերկու նեղ ուղղանկյունն մասերը, միայն թե հակառակ կողմերով. ծալել նաև սրանց ազատ ծալրերը: Ուրեմն այսպիսի թղթիկներ նախորոք պետք ե պատրաստել: Այս փաթեթների մեջ թիթեռներն անվնաս կմնան: Փաթեթներն իրար վրա կարող եք դարսել արկղում և այդպես ել ապահով տուն բերել: Հիմա կասեք, ո, այդ ել մի ավելորդ արկղ: Այս, այդ կլինի յերկրորդ արկղը, բայց դեռ յերրորդն ևս հարկավոր ե: Ի՞նչ գժվարություն կպատճառի, յեթե յերրորդն ել վերցնեք: Հո՝ պարապ, ժամանց-զբոսանքի չեք դուրս գալիս. յեթե իսկապես բնասեր եք և բաներ հավաքելու լուրջ մտադրություն ունեք, պետք ե բոլոր անհրաժեշտ իրերով

զինվեք։ Արկղները թող մեծ չլինեն։ կարելի յե ստվարաթղթի կամ ել գիլզաների բարակ փայտե արկղներ գործածել։ այդ բոլորը կզահեք ձեր եքսկուրսիոն պարկում։ իսկ յեթե եքսկուրսիայի գուցս կզաք մի քանի հոգով, այդ դեպքում իրերի պահելու հարցում ևս աշխատանքի բաժանում կկատարեք։

Յերրորդ արկղի փոխարեն կարելի յե մի քանի հատ գլանակի մեծ ու փոքր տուփեր վերցնել։ Այս տուփերի մեջ կտեղավորեք այն միջատներին, վորոնք իրենց կյանքով ուշագրավ կլինեն։ Զբոսանքի ժամանակ կպատահեք այնպիսի բզեզների, վորոնց գույնը շատ նման է ծառի կեղեին ու տերեներին—կանաչ կամ չորացած։ Ուրեմն այս կամ այն միջատին ցանցով վորսալիս, պիտի ծառերի կեղեներին նույպես ուշադիր դիտել։ Յերեմն միջատին սկզբից դժվար է լինում նկատել, վորով հետև դրանք հեռվից շատ նման են ծառի կեղեի ծալքերին կամ բշտիկներին։ Հազիվ ծառին եք մոտենում, և նա վայրկենապես կծկվում ե. լավ դիտելուց հետո միայն նկատում եք, վոր նա միջատե, և հասկանում եք, թե միջատն ինչու կծկվեց, ինչու նրա գույնը բնի նման—մոխրագույն է։ Հասկանալի յե, վոր յեթե մենք նրանց սկզբում դժվարությամբ ենք նկատում, նրանց թշնամիները—թոշուներն ու մողեսները առավել ևս շուտ կխարվեն։

Շատերն անշուշտ այդ բանի վրա կզարմանան, բայց կբավականանան միայն միջատին ընդհանուր բանկան ցցելով և շուռով բգեզի մասին ել կմոռանան։ Բայց արդաես չպիտի անել։ Նախ քան միջատին ընդհանուր բանկան ցցելը, հուշատեարում պետք է գրել այդ դեպքի մասին և համառոտակի զրի առնելնույն այդ միջատի նկարագիրը, վորպեսզի հետո հեշտությունը գտնել կարողանար։ Անպատճառ պետք է մի փոքրիկ կտոր կտրել նաև այն կեղեից, վորին բգեզը յուր գույնով նմանվում էր։ Յեթե ձեր հիշողության վրա վստահ չեք, այդ դեպքում սատկեցրած միջատին տեղափոխեք զլանակի տուփերից մեջ, բամբակով խնամքով տեղափորեք և նույն տուփի մեջ։

Դրեք և կեղեի կտորը։ Անշուշտ կմտածեք՝ ինչ նշանակություն ունի այդ։

Ահա՝ թե ինչ։

Միջատներն ունեն իրենց թշնամիները—թոշուներից, մողեսներից և այլ կենդանիներից։ Թշնամիներից ազատվելու տարբեր միջոցներ կան։ կամ փշեր, յեղջուրներ պիտի ունենալ, կամ անգուրեկան համ ունենալ և թունավոր նյութեր արտադրել և կամ թե՝ աննկատելի պիտի լինել։ Հաճախ կպատահանի, վոր միջատին կըռնեք, և նա անմիջապես մի այնպիսի անգուրեկան հոտ ունեցող հեղուկ կարտադրի, վոր դուք միջատին գարշանքով դեն կշպրտեք և նա այդպիսով ազատված կլինի։ Յեթե մարդն անգամ զգվում է ու միջատին վախենալուց բաց թողնում, ապա ուրեմն թոշուներն ու մողեսներն այդպիսի միջատներից ավելի շուտ կհրաժարվեն։

Ահա մոտենում եք մի ծառի և դեռ հեռվից նրա բնի վրա նկատում եք ինչ վոր շարժվող մի գունդ։ մոտենում եք այս կողմ եք նայում, այն կողմը և վոչինչ չեք նկատում։ Դե, իհարկե, ձեր տեսողությունն այնքան ել թուզ չե, վոր միջատի խորամանկությունը չտեսնեք։ Վերջապես միջատին գտնում եք։ Բղեղ ե, կծկված, անշարժ նստած է ծառի կեղեի ծալքերի մեջ։ Սկզբում շարժվում եր, բայց հենց վոր թշնամու մոտենալը զգաց, իսկույն դարձավ անշարժ և կծկվեց իր տեղում։ Նա իր գույնով վորքան նման եր ծառի բնին։

Պատահում են այնպիսի միջատներ, վորոնք իրենց գույնով չորացած տերենի նման են։ այսպիսի դեպքում անհրաժեշտ է միջատի հետ նաև չորացած տերեր վերցնել։ Լինում են նաև այնպիսիները, վորոնք նման են ճուղերին, ծաղիկներին, պտուղներին, բողբոջներին և այլն։ Այդպիսի դեպքերում, ամեն անգամ միջատի հետ պիտի վերցնել նաև այն առարկան, վորին միջատը նմանվում է։ Անգամ յեթե միջատը գույնով նման է մամուռին, քարաքոսին—այդ բույսերից ել մի կտոր կարեք։

Իսկ յեթե դանվում եք բաց, բուսականությունից զուրկ դաշտում, ելի կհանդիպեք միջատների, բայց այս անգամ ար-

գեն հողագույն և յերբեմն ել ձեռվ շատ նման գետնի վրա թափթփված կավե պնդացած փշրանքներին։ Որինակ, հենց մորեխները հետաքրքրական ե այդ միջատի մի տեսակը, վորից Յերևանի քարքարոտ շրջակալքում շատ կա. որինակ, հենց դեպի Քանաքեռ տարածվող բարձունքներում։ Յերբ մորեխը նստում ե գետնին, շատ դժվարությամբ և նկատվում է նա բավականին խոշոր ե ու հաստ և շատ ե նման կավի մի կտորի։ Ուրեմն պարզ ե, վոր այս միջատին բռնելիս, կավի կամ հողի մի կտոր ել հետք պիտի վերցնել, վոր արկղում տեղափորելով՝ միջավայրը պատկերացնել կարողանաք։

Գույնով, ձեռվ միջավայրին ու շրջապատի առարկաներին նմանվելը կենդանիների մեջ տարածված յերեսով ե, մանավանդ միջատների։ Որինակներ ամեն մի միջավայրում ել կը դառնեք, վորքան ուղենաք, միայն թե հարկավոր ե ուշադրությամբ դիտել։

Միջատներ կան, վորոնք միայն յերեկոները կամ գիշերներն են գուրս գալիս։ Դրանց կարելի յե ճրագի միջոցով վորուալ։ Ճրագը պիտի դնել սեղանի վրա պատշգամբում և մի քիչ ժամանակ սպասել շուտով ճրագի շուրջը բազմաթիվ միջատներ կհավաքվեն։

---

Մենք մեր եքսկուրսիան վերջացրինք, չափաքել ենք բավականաչափ կենդանիներ—միջատներ ու սարդեր։ Վերջիններիս նույնպես պահել ենք առանձին տուփի մեջ։ Վերադառնում ենք տուն։ Այժմ պիտի մեր հիմնական աշխատանքը կատարենք։ Միջատներին պիտի կարգի բերենք՝ դասավորենք։ Այդ աշխատանքների համար ել հատուկ իրեր են պահանջվում։ Նախ և առաջ պիտի պատրաստել մի մեծ, ապակեծածկ խուփով արկղ։ ապա սրա մեջ պիտի մշտապես տեղափորել կարգի բերած միջատներին։ Լավ կլիներ, յեթե թիթեռների համար հատուկ արկղ ունենալիք։ Այդ կոլեկցիոն արկղի հատակին ամբողջովին խցանի կամ տորֆի շերտ պիտի լինի (վերջինս ավե-

լի եժան ե). այդ նրա համար ե, վոր գնդասեղները լավ պահ վեն։ Յեթե խցանի կամ տորֆի թերթ ձեզ չհաջողվի գտնել, այդ դեպքում շատ սովորական խցաններից լայնությամբ միքանի հավասար հաստության շրջաններ կտրեք և կպցրեք արկղի հատակին։ իրարից շատ մոտ չկպցնեք, վորպեսզի գնդասեղած միջատներն իրար չկպչեն։ Միջատներին ասեղելու համար հատուկ ասեղներ կան, վորոնց ենտոմոլոգիական տարրեր են անվանում։ դրանք տարբեր համարների չեն—զրոյից սկսած։ Շատ բարակները կգործածեք մանր, փափուկ միջատների համար, իսկ հաստ գնդասեղները—կարծր և խոշոր միջատների համար։ Իսկ յեթե այդ գնդասեղներից ձեռք բերել չկարողանաք, այդ դեպքում չերկած սովորական գնդասեղներ վերցրեք։ բայց աշխատեք բարակ տեսակներն ընտրել։

Միջատներով լիքը բանկան բաց կանեք. եքսկուրսիոն պարկում լիղած և տուփերում, բամբակների մեջ դարսված միջատներին կհանեք, իսկ թիթեռներին կհանեք թղթի փաթեթներից։ Յեթե ձեր եքսկուրսիան յերկարատև յեղել, կամ մի այլ պատճառով նույն որը չեք կարողացել միջատներին գուրս բերել, վորի հետևանքով սրանք չորացել, ու նրանց մարմնի մասերն ամրացել են այնպես, ինչպես վոր ծալված ելին։ Այդ թեեւ լավ չե, բայց կարելի յե դրա դեմք առնել։ Այդպիսի դեպքերում չորացած միջատներին դնում եք խոնավ ավազի վրա, և վրան լայնաբերան ապակով ծածկում։ Խոնավությունից կարծրացած մասերը կփափկեն ու հեշտությամբ ձեր տված նոր դիրքը կընդունեն։

Ի՞նչպես ուղղել միջատի մասերը յեկ ինչպիսի՞ դիրք տալ։ Այժմս խոսենք այդ մասին։ Նախ բղեղներից սկսենք։

Նախ ընդհանուր գծերով ծանոթանանք բղեղի կազմության հետ։ Բղեղի մարմինը բաղկացած ե յերեք մասերից—առգլուխ, բ. կուրծք, գ. փոր։ Կըծքին վերեկից ամրացած են յերկու զույգ թևեր։ մի զույգը (ներքին թևերը) նուրբ են, թափանցիկ ու թաղանթանման (իսկական թևեր), վորոնք ծառայում են թռչելու համար, իսկ մյուսը՝ արտաքին զույգը—յերբեմն

քիչ ուռուցիկ, գունավոր զարդերով — կարծր վերնաթերեն են: Մրանք իսկական թերի պաշտպանության համար են: Թուչելու ժամանակ բղեղը վերնաթերը բաց ե անում և տարածում ե յերկու կողմի վրա. սրանք անշարժ են, մինչդեռ ներքին՝ իսկական թերը թափահարվում են ու թուչելու համար են ծառայում:

Բգեցն ունի յերեք զույգ վոտքեր. վոտքը բաղկացած ե՝ 1. աղղթից, 2. սրունքից, 3. թաթից. թաթը կաղմված ե մի քանի հատվածներից, վերջին հատվածի վրա յերկու սրածար մագիլներ են բազմած: Դլիսի վրա, սովորաբար աչքի մոտից, դուրս են ցցված բղեղի շոշափուկները — յերկար ու հատվածավոր: Վոմանց մոտ այդ շոշափուկները ծալրում վերջանում են գնդաձև կամ թերթավոր լախվածքով: Բերանի մոտից կարճ շոշափուկներ են ցցված: Յերկու ծնոտներն ել հարմարված են սնունդը կտրելու, կրծելու համար:

Այժմ բղեցներին պետք ե գնդասեղի վրա անցկացնել: Ինարկե, միշտ նախ պիտի նայեք, թե ի՞նչ բղեղ ե. յեթե խոշորն ե, ինչպես, որինակ, մայիսյան բղեղը, այդ դեպքում կը վերցնեք հաստ գնդասեղ: Յեթե բղեղի փորը կրծքից լախ ե ու յերկար, այդ դեպքում գնդասեղն անց եք կացնում փորի միջով և անպատճառ աջ վերնաթեռվ, քիչ մոտ կրծքի մասին (քարտ 2, նկ. 7): Գնդասեղն իջեցնել այնքան, վոր վերի մասում ավելի քիչ տարածություն մնա, քան ներքեռում (գնդասեղի յերրորդ մասը. նկ. 7): Պատահում են բղեցներ, փորոնց կուրծքը և փորը միաչափ են, նույնիսկ կուրծքը քիչ լախ ե, — այսպիսի դեպքում գնդասեղը պիտի անցկացնել կրծքի մեջ-տեղից: Լինում են և այնպիսիները, փորոնց կրծքի և փորի սահմանում գտնվում ե յեռանկյունաձև մեծ վահանիկ (մարմնի վերի մասում). այդպիսի վահանիկներ համարյա բոլոր բղեղներն ել ունեն, բայց տարբեր չափի: Յեթե վահանիկը խոշոր ե, այդ դեպքում հարմար ե գնդասեղը վահանիկի միջով աց-կացնել (քարտ 2, նկ. 8. ա. բ. գ):

Իսկ յեթե բղեցները շատ փոքր են, ի՞նչպես անել — կհարցնեք դուք: Փոքրերին կարելի յե ամենաբարակ գնդասեղով անցկացնել. իսկ շատ փոքր բղեցներին, փորոնց մարմինը առանց յերկու կես անելու անկարելի յե բղեղին գնդասեղել, — այդ դեպքում վարվեցեք այսպես. — հաստ թղթից կտրեք քառակուսի կամ յեռանկյունի փոքրիկ թղթիկ և խեժով (գումիաքաբիկում) բղեղին կպցըեք սրա մի ծալրին (լավ կլինի, յեթե միեւույն տեսակից յերկուսը կպցնեք — մեկը՝ փորի, իսկ մյուսը՝ մեջքի կողմով), իսկ թղթի մյուս ծալրով անցկացըեք գնդասեղը: Յերկու բղեղիկներ եք վերցնում այն պատճառով, վոր նրա բոլոր մասերն ել յերեան (քարտ. 2. նկ. 9):

Մի բան չմոռանաք: Յենթագրինք, թե բազմաթիվ բղեցներ եք գնդասեղով անցկացըել. դրանով չկարծեք, թե աշխատանքը վերջացըիք: Քանի բղեղը դեռ չի չորացել ու կարծրացէլ, պետք ե վոտքերն ուղղել: Յեթե դրանք գեղի ներս են ծալված կամ թե անկանոն կերպով այս կամ այն կողմն են ցցված, հարկավոր ե դուրս ծալել և զուգահեռ ամեն մի զույգը դասավորել ու մարմնից քիչ դուրս ուղղել: Ճիշտ ե, յերբեմն ձեր կողմից ուղղված վոտքերը հաճախ ելի ներս են քաշվում: Դրա համար հարկավոր ե գնդասեղներով վոտքերին ցանկացած զիրքը տար, և բղեցներին այդ դիրքում պահել գոնե ձեկ որ, մինչեւ վոր վոտքերը կարծրանան, վորից հետո մշտապես կպահպանեն ձեր տված զիրքը: Ինարկե, անհրաժեշտ ե բողկուկն ու շոշափուկները նույնպես դուրս ցցել: Դարձյալ գնդասեղներով պատճեները կդնեք, վոր նորից յետ չծալվեն: Մի խոսքով՝ բղեղի մարմինը գնեղասեղների պատճեշներում կպահեք այնքան ժամանակ, վոր գնդասեղը հանելու դեպքում մարմնի ցցված մասերը նորից յետ չծալվեն: Այդ աշխատանքը թեև դժվար չե, բայց համբերություն ե պահանջում: Ուրեմն բոլոր բղեցներին արկղիկից անմիջապես չհանել: Նախ կարգի կրերեք մի տասնյակ բղեցներ, և յերբ դրանք պատրաստ կլինեն, կղիմեք մյուս տասնյակին: Համենայն դեպս յեթե բղեղին դուրս եք բերել, այդ դեպքում հարմար ե գնդասեղը վահանիկի միջով աց-կացնել (քարտ 2, նկ. 8. ա. բ. գ):

նկարագրած ձեռվ ուղղել, այլապես իրար խառնված վոտքերով՝ չորացրած բզեզը կկորցնի իր գեղեցկությունն ու արժեքը:

Բայց շատերը կմտածեն, թե մինչեւ վոր մի տաւնյակը բզեզ կարգի բերեն, բավական ժամանակ կանցնի. իսկ այդ միջոցին մյուսները կչորանան, ուրեմն և նրանց ուղղելու աշխատանքը կդժվարանա: Իհարկե, կարելի յեւ և չսպասել, յեթե միայն բավականաշափ գնդասեղներ ունեք. իսկ յեթե գնդասեղների բանակը սահմանափակ եւ և այդ պատճառով միջատները մնում են ու մի փոքր կարծրանում, այդպիսի դեպքերում լավ կլինի չփորձել անպատճառ նրանց ուղղել, այլապես կարող եք հանկարծ վոտքերը կոտրել: Այդ գեղքում ավելի լավ ե այսպես անեք. — թղթի վրա հող ածեք և ջրով թրջեք. ապա վրան շարեք չորացած բզեզներին, լայն բանկայով ծածկեք: Այսպես կպահեք մի քանի որ, վորից հետո հնարավոր կլինի առանց վոտքերն ու բողկուկները ֆլասելու — ուղղել:

Ուրեմն, չմոռանաք, վոր եքսկուրսիայից վերադառնալով՝ աշխատանքը չպիտի հետաձգեք, իսկուն գործի պիտի անցնեք: Վորքան աշխատանքը ուշ սկսեք, այնքան նա կբարդանա ու կդժվարանա:

Արդեն ուղղված մասերով գնդասեղած բզեզներին դասավորել եք մեծ, հատուկ արկղում:

Այժմ կարգի բերեք թիթեռները: Ինչպես ասացինք, թիթեռը կամ պետք ե փաթեթներում պահելիք և կամ, ինչպես սովորաբար անում են, հենց թողնելիք մեռցնող բանկալի մեջ: Սատկեցրած թիթեռի թևերը ծալված են լինում. հարկավոր ե նրանց ուղղել, բաց անել և այդպես ել թողնել: Թևերը բաց արած պահելու համար կա հատուկ փայտե գործիք, վորին կարելի յեւ «թևուղղիչ» (расправилка) անվանել (քարտ. 2. նկ. 10): Թևուղղիչներ կարելի յեւ պատրաստի ձեռք բերել, բայց և կարելի յեւ հասարակ ձեռվ պատրաստել. և այդ ինքնաշեն գործիքն ել իր նպատակին կծառալի: Պատրաստել այսպես: — վերցնել մի տախտակ՝ տես-

րակի յերկարությամբ, իսկ լայնությունը — տետրակի լայնության կիսի չափով. ծայրերին ցածր տախտակի կիներ ամրացնել, իսկ դրանց վրա յեւ յերկու ուրիշ, նեղ ու յերկար տախտակիներ խփել (տես քարտ. 2. նկ. 11): միմյանցից վորոշ հեռավորությամբ: Տախտակների միջի այս արանքի լայնությունը չպիտի ամենամեծ թիթեռի մարմնից (վորի ու կրծքի լայնությունից) ավելի նեղ լինի: Ճեղքի ուղղությամբ, տակով, հիմնական տախտակին տորֆ կամ խցանի շերտ ամրացրեք: Սա մի քիչ բարդ ձեն ե, բայց կարելի յեւ ավելի հասարակ ձեռվ պատրաստել: Վերցնում եք յերկար բառակուսի փայտ (վերը նշած հասառության ու յերկարության): Սրա յերկարությամբ մեջտեղում, պահանջված լայնությամբ նեղ անցք եք բացում, վորի խորությունը լինի այնքան, վոր ձեր գործածած ամենամեծ գնդասեղի մի յերրորդ մասը դուրս մնա: Անցքի յերկու կողքերում տախտակը գանակով կտրել և քիչ թեք ուղղություն տալ (դեպի ներս): Սովորական «թևուղղիչի» կողքերն ել քիչ թեք են. այդ նրա համար ե, վոր թիթեռի թևերն ել թեք ուղղությամբ չորանան: Անցքի հատակին դարձալ պիտի տորֆ կամ խցան գնեք, վոր գնդասեղն ամուր պահի: Այժմ անցնենք թիթեռին: Նրան պիտի կրծքից գնդասեղել. նախորոք մատներով կուրծքը բռնում եք կողքերից և ապա վերևից գնդասեղն անցկացնում. այս գեղքում ել գնդասեղի մեծ մասը մարմնի տակը պիտի լինի: Գնդասեղած թիթեռին մտցնում եք թևերուղիչի նեղ անցքի մեջ, բայց վոչ շատ խորը, այլ այնպես, վոր բացված թևերն ազատ փովեն ուղղիչի յերկու կողմերի վրա: Ապա թիթեռի թերը նեղ թղթիկներով մի քանի ուղղությամբ ամրացնել տախտակին, վոր նորից նրանք չծալվեն. թևերը նեղ թղթերով ամրացնելիս գնդասեղեք զգուշությամբ վոր թևերը չծակեք: Այդ թղթե կապաններում պահել գոնե մեկ որ, յեթե մյուս որը կապանները հանեցիք ու թևերը չծալվեցին, ուրեմն թիթեռը պատրաստ ե: Զմոռանաք նաև թիթեռի բողկուկներն առաջ ցցել և այդպիսի դրությամբ չորացնել: Մեկ թևուղղիչի մեջ միաժամանակ մի քանի թիթեռներ կարող եք տեղափորել:

Յեթե թևուղղիչ գնել կամ շինել չկարողանաք, այդ դեպքում վարկեցեք հետեւալ ամենահասարակ, պարզ ձևով։ Գնդասեղած թիթեռն ամրացնում եք տորֆի կամ խցանի թերթի վրա կամ մի ուրիշ այնպիսի բանի, վորի վրա գնդասեղը լավ պահվի։ ապա նույն ձևով թերթը բաց եք անում, վրան նեղ թղթե գոտիները դնում և ապա ծայրերից (գոտիների) գնդասեղներով ամրացնում տախտակին։ Ուղղված թիթեռներին տեղավորում եք ապակեծածկ խուփով հատուկ արկղում։ Յուրաքանչյուր թիթեռի, ինչպես և ամեն մի վերջնականապես տեղավորած միջատի տակին կպցնում եք մի-մի նեղ թղթիկ և դրանց վրա գրում եք միջատի անունը։ իսկ յեթե ձեզ համար անունն անհայտ է, այդ դեպքում անպատճառ պիտի գրեք — լեռը և բռնված (տարին, ամիսն ու թիվը) և գմրտեղ։


Բոլոր միջատների անուններն, ինարկե, դժվար ե իմանալ։ վրա համար կան հատուկ գրքեր, ատլամեր բազմաթիվ գունավոր նկարներով։ Միջատների անունները կարելի կլինի հենց այդ նկարներով իմանալ, յեթե միայն միջատն այնքան ել հաղվագուտաներից չե և շատ տեղերում ե պատահում։

## Քարտ 3.

Ինչպես կազմել ապակեծածկ և սպիրտային կոլեկցիաներ։  
Նկարներ՝ 1. Խնչպե՞ս են տուփ յել կոլեկցիա պատրաստում։ ա.՝ բացված տուփ առանց հատակի ու կափարիչի (պատրաստված ստվարաթղթով)։ գծերը արտահայտում են ծալեր։ բ.՝ տուփի շրջանակը (ա. բացվածքը ծալված ու ծալրում միացված)։ ս.՝ տուփը պատրաստ (հատակն ու կափարիչը նույնպես միացված), դ.՝ տուփը բոլորովին պատրաստթիթեռներով, ե.՝ կոլեկցիայի տուփը (բզեզներով) առանց ապակու և ապակիով։

2. Սերմերի կոլեկցիա։ ա.՝ սերմերի ֆուտլարը բացված։ ա. հիմքի ստվարաթղթով, բ.՝ ստվարաթղթուղթը կտրված քառակուսիներով ու շրջանակներով, վորոնց մեջ սերմեր են լցվում (յեթե սերմերը մեծ-մեծ են՝ միջի՝ քառակուսիներով ու շրջանաներով կտրտած ստվարաթղթից պիտի վերցնել կրկնակի, յեռակի որինակներ, նայած սերմի մեծության և ստվարաթղթի հաստության)։ գ.՝ ապակի ծածկոց։ ե.՝ սերմերի պատրաստի կոլեկցիան (մի շրջանը դատարկ)։

3. Սպիրտային պիտի պատրաստ։ ա.՝ գլանաձև անոթ։ ե.՝ մողեսը ապակու վրա կապված։ ս.՝ գորտը սպիրտի մեջ (փակված բանկալում)։



### **3. ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՈԼԵԿՑԻԱՆԵՐ**

Միջամտների կյանքից բիոլոգիական բազմաթիվ կոլեկցիաներ կարելի է կազմել։ Արդեն ասացինք, թե միջատ հավաքելիս միշտ նկատի պիտի առնել և առանձին պահել այնպիսիներին, վորոնք վորևե հետաքրքրական կենսական հատկանշով աչքի լին ընկնում։ Արդեն գիտեք, վոր առանձին ուշադրություն պիտի դարձնել այնպիսիների վրա, վորոնք իրենց գույնով նմանվում են ծառի կեղեխն, տերևեխն (չոր, գեղին կամ կանաչ) կամ շրջապատի ուրիշ առարկաներին. դրանցից վորմանք ել իրենց ձևով են շրջապատի առարկաներին նմանվում։

Այդպիսի որինակները չաղթե ընդհանուր կոլեցիոներական տուփի մեջ դնել, այլ անհրաժեշտ ե տեղավորել առանձին ապակեծածկ տուփերում։ Նախ տուփի հատակին կամրացնեք այն առարկան, վորին միջատը նմանվում է, և ապա վրան կկպցնեք միջատին։ Դրա համար կարող եք ոգտագործել զլանակների տուփերը, յեթե միայն դրանց խորությունը բավարար կլինի—միջատն ու առարկան (վորին միջատը նմանվում ե) տեղավորելու համար։ Վերևի պատը ապակուց պիտի լինի. ապակին կկպցնեք այսպես.—մեկ ձեր—տուփի կափարիչի վրա քառակուսի խորշ եք բացում, ապա այդ շրջանակի տակ ապակի յեք կպցնում, մկուս ձեր—կափարիչը բոլորովին կտրում եք, տուփի յեղբերից (հատակից սկսած) թղթե ժապավեններ կպցընում (տուփի խորությունից քիչ բարձր) այնպես, վոր թուղթը նեղ շերտով քիչ դուրս մնա. այդ ազատ մասերը հորիզոնական ուղղությամբ դեպի ներս ծալեք, վրան վորեն կպցնող նյութը (ոսլայի կամ ալյուրի շրեշ) քսեք. այնուհետև նախորոք տուփի չափով կտրած քառակուսի ապակին դրեք հորիզոնական դիրքով դեպի ներս ցցված թղթիկների վրա։ Ներսից թղթիկները կկպչեն ապակուն։ Իհարկե, դեռ դրանից առաջ միջատն ու առարկան ամրացրած պիտի լինեք տուփի հատակին։ Տուփին մաքուր տեսք տալու համար նրա չորս կողմը մաքուր թուղթ կպցընեք, այն հաշվով, վոր յերբ կողքերից թուղթը ապակու

Վրա ծալեք, այդ ծալված մասերը ծածկեն ապակու տակից կպցրած թղթիկների շերտը:

Գլանակի տուփեր չգտնելու դեպքում, վոչինչ, կարելի է  
և ստվարաթղթից պատրաստել. այդպիսի դեպքում արդեն ցան-  
կացած մեծության ու խորության տուփեր կպատրաստեք:

Ստվարաթղթից պատրաստել այսպես.—ստվարաթղթից  
կտրել մի յերկար ժապավեն, վորի լախությունը կլինի  
ապագա տուփի հենց բարձրությունը. վրան մատիտով նշանա-  
կել կողմերը, իհարկե, գծել այն հաշվով, վոր դիմացի կողմերն  
իրար հավասար լինեն. գծված տեղերով (կողմերը բաժանող  
գծերով) դանակով թեթև կտրել (վոչ բոլորովին), ապա ժապա-  
վենը ծալել հակառակ ուղղությամբ: Քառակուսի շրջանակի  
ազատ ծալքերը կպցնել թղթով: Նախապես կտրեք սովորական  
մաքուր թղթից ժապավեններ.—ստվարաթղթի ժապավենից քիչ  
լայն (քարտ 3, նկ. 1): Այդ թուղթը կպցնում եք շրջանակի  
ներսի կողմից այնպես, վոր ները և վերելի կողմերից թղթի  
ազատ յեղքեր մնան. յերբ թուղթը կպավ, որա ազատ մասերը  
ծալել գեպի ներս: Ստվարաթղթից պատրաստում եք տուփի  
հատակը—շրջանակի չափ: Թղթի ներս ծալած յեղքերը շրեշում  
եք և վրան դնում հատակը, այդպիսով կպցնում: Վորպեսզի  
հատակը լավ պահվի, ներսից մի շերտ թուղթ ել կպցնում եք  
հատակի ամբողջ մակերեսի վրայով—յեղքերը անց եք կացնում  
տուփի կողքերին. դրանց ել թղթի ժապավեններով ամրացնում  
եք հատակը:

իհարկե, այդ աշխատանքն շտապ չպիտի անել. ժամանակ առ ժամանակ պիտի սպասել, վոր կպցըած տեղերը լավ չուրանան։ Յերբ տուփի մեջ կտեղավորեք միջատին ու առարկան, այն ժամանակ միայն կարող եք վերեից կպցնել նաև ապակին։ Ելի ներս ծալած թղթի վրա շբեշ եք քսում և ապակին դնում վրան (ապակին նախորոք լավ մաքրած պիտի լինի, աշխատանքի ժամանակ ել չկեղտոտել)։ Այնուհետև տուփի չորս կողմով մաքուր թուղթ կպցնել. նախ կողքերից կպցնել ճիշտ այնպես, ինչպես ներսի կողմից արեցիք։ Համենայն դեպս այնպես անել,

վոր թղթից քիչ անցնի ապակու վրա և ծածկի ապակու ներսից կպցրած յերեացող թղթիկները: Իհարկե, ձեզանից ամեն մեկը աշխատանքի ժամանակ կարող ե այս կամ այն ձեռվ կատարելագործել այս գործը: Վորոշ կոլեկցիաների համար արժե տուփի թե հատակը և թե խուփը ապակուց անել. այս դեպքում նախ ապակու վրա փոքրիկ խցանիկներ եք կպցնում, իսկ խցանի վրա կամ գնդասեղում միջատը (կարճ գնդասեղներով) և կամ միջատն առանց գնդասեղի կպցնում:

Նկարագրած տուփերից աշխատեցեք պատրաստել վորքան կարող եք, և այն ել տարբեր չափի ու խորության: Այդ աշխատանքով զբաղվեցեք ձմեռը, կամ գարնան սկզբին. մի խոսքով՝ պատրաստում եք նախորոք և միայն տուփի խուփը չեք կպցնում, թեև դրա համար ել համապատասխան ապակիներ նույնպես պատրաստում եք (քարտ. 3. նկ. 1. a. b. c. d. e.):

Թվեմ այստեղ, թե ի՞նչ կոլեկցիաներ կարելի յե կազմել:

1. Միջատը (անունը) նմանվում ե ծառի կեղեկին (գույնով):
2. Միջատը ձեռվ ու գույնով նմանվում ե ծառի կեղեկին:
3. Միջատը նմանվում ե մամուռին:
4. Միջատը նմանվում ե քարաքոսին:
5. Միջատը գույնով նմանվում ե կանանչ տերեկին (իհարկե, նախորոք չորացնել տերեկ):
6. Միջատը գույնով նմանվում ե չորացած, դեղնավուն տերեկին:
7. Տերեանման միջատներ (անունը):
8. Ճյուղանման միջատներ (անունը):
9. Բողբջանման միջատներ (անունը):
10. Ցեղենու կեղեակերը (տուփի հատակին կպցնել—կեղել՝ կտրաված, կերպած անցքերով, անցքերում միջատի թրթուրը, կողքին հարսնյակը, ապա չափահաս միջատը):
11. Տերեակեր միջատներ (կերպած տերեկի վրա կպցնել):
12. Աղբաբգեզներն աղբից գունդ են պատրաստում (գնդի վրա կպցնել յերկու աշխատող բգեզներ, եքսկուրսիա-

յի ժամանակ կպատահեն գունդ ծեփող աղբաբգեզներ. հիշեք նրանց դիրքը և հենց կոլեկցիայում այդպիսի դիրք ել տվեք: Լավ կլիներ տայիք մի ուրիշ գնդի կտրվածք, մեջը ձվիկով կամ թրթուռով. այդպիսով պարզ կլինի, թե ինչի՞ համար են աղբաբգեզները ծեփում):

13. Գիշատիչ միջատներ (կպցնել կերպած զոհը և նրա շուրջը գիշատիչներին—գլուխները զոհի վրա դրած):
14. Ջրախն բգեզներ (տուփի հատակին կպցնել բաց կապուտ թուղթ՝ իբրև թե ջուրն ե, ապա վրան՝ բգեզներին):
15. Ջրոջիներ (որինակ, ջրակարիճ, թիկնալող, ջրաչափ):
16. Շերամ (թթենու տերեկ, միջատի ձվիկներ տերեկի վրա, թրթուռ, չափահաս թիթեռ, բոժոժ—ամբողջական և կտրված՝ մեջը—հարսնյակով): Իհարկե, այս կոլեկցիայի համար մեծ տուփ ե հարկավոր:
17. Մեղու. չեչը, մեղուներ, —թագուհի, բանվոր, բոռ, ձվիկ, թրթուռ, հարսնյակ:
18. Իշախառանչ և իր բունը (գրքի նկարին նայելով՝ կավից ծեփել սրա բնի կտրվածքը: Անցքերից մեկում տեղափորել միջատին. մյուսին՝ բնից կիսով չափ գուրս լեկած. իսկ բնի վերջում —ձվիկներ. յեթե ձվիկներ չգտաք, կարող եք գաճից պատրաստել):
19. Կաղամբաթիթեռն ու նրա հասցրած վլասը. — հարկավոր են կաղամբի կերպած տերեկ (նախապես չորացնել), թիթեռ, նրա ձվիկները, թրթուռը, մյուսի կտորի վրա՝ հարսնյակ:
20. Միջատների վոտքերը—(որինակ՝ վազող—գիշատիչ բգեզ, փորող—իշախառանչ, ծեփող—աղբաբգեզ, լողացող—ջրասերի, ցատկող—մորեխի (կանաչ և չփող), ծղրիղի):
21. Թռչունների վոտքերի (թաթերի) կոլեկցիա (որինակ՝ աղավնու, հավի, բաղի, բազելի (կամ ուրիշ գիշատչի),

փայտփորի և ուրիշ բազմաթիվ թռչունների: Իհարկե, այս կողեկցիան մեծ է, (և գժվար կլինի պատրաստել, թանգ ել կնստի): Աղա ուրեմն տուփի կարիք չկա: Ավելի լավ է թռչունների թաթերը թելերով ստվարաթղթին կպցնեք):

Բացի վերոհիշալներից ուրիշ շատ հետաքրքրական կողեկցիաներ ել կարելի յե կազմել: Անհրաժեշտ է անպատճառ կարդալ կենդանաբանական, բուսաբանական վորևե գիրք և այն ժամանակ ինքներդ կկարողանաք նորանոր հավաքածուներ մտածել ու կազմել:

Մի բան ևս չմոռանաք—հավաքած կենդանիների, բույսերի հետ լավ ծանոթանալու համար, աշխատեցեք անպատճառ համապատասխան գրքեր գտնել և կարդալով, այդ կենդանիների մասին մանրամասն ծանոթանալ:

#### Քարտ 4



Քարտ 4.

Նկարներ.—1. Խլուրդի բունը կավից պատրաստած (ապակեծածկ տուփի մեջ է). 2—կաղամբաթիթեռ. 3—խեցեախնն ու նրա մարմնի մասերը:

#### 4. ՍՊԻՐԱՅԻՆ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐ

Կամ այնպիսի կենդանիներ, բուլսեր, վորոնց չոր դրությամբ պահելը հեշտ բան չե։ Նրանք կամ փտում են կամ այնպես են չորանում ու կծկում, վոր ամբողջապես կորցնում են իրենց բնական տեսքը։ Այդպիսի գեղքերում կենդանիներին պետք է պահել սպիրտի կամ ֆորմալինի մեջ։ Սպիրտային պրեպարատներ պատրաստելը վորոշ դժվարությունների հետ է կապված։ իհարկե, հենց սպիրտ ձեռք բերելը վորոշ ծախսեր ե պահանջում։ Յեթե սպիրտը մատչելի չե, նրան կարելի յե փոխարինել ֆորմալինով, վորը համեմատաբար ավելի մատչելի նյութ ե։ Յեթե դեղատները, առանց բժշկի թուլավորթյան, դժվարացան ֆորմալին տալ, այդ գեղքում թուղթ վերցրեք կամ մի ծանոթ բժշկից և կամ դպրոցի վարչությունից, վորից հետո ֆորմալին հեշտությամբ կտան։

Յեթե սպիրտ գտաք—ավելի լավ։ Զտված մաքուր սպիրտ չգործածել, պիտի հետը ջուր խառնել. յերկու-յերեք բաժակ սպիրտին խառնել մի բաժակ ջուր։ Խորհուրդ ենք տալիս այդ խառնուրդին մի քիչ աղ կամ շիր (կվացչա) ավելացնել, վորով հետև սրա շնորհիվ կենդանիների գույնն ավելի յերկար է պահպանվում։

Յեթե ֆորմալին եք գործածում՝ սրա հետ ևս ջուր պիտի խառնեք և այն ել ավելի մեծ քանակությամբ. այնպես, որինակ, — մեկ մաս ֆորմալինին պիտի խառնեք 15—20 մաս ջուր։ Մաքուր ֆորմալին վոչ մի գեղքում չգործածել, պրեպարատները նրա մեջ կկարծրանան ու կփետանան։ Սպիրտի համեմատությամբ ֆորմալինի պակասությունը կայանում է նրանում, վոր սրա մեջ պրեպարատը այնուամենախիվ կարծրանում է. բայց դրա փոխարեն առավելություն ել ունի, այն ե՝ նրա մեջ գույներն ավելի յերկար են պահպանվում ու ֆորմալինն ավելի յերկար են պահպանվում ու ֆորմալինն ավելի եժան և նստում։ Ֆորմալինի հետ պիտի զգուշ վարվել, — սրա գաղերը չշնչել, աչքերից հեռու պահել, ֆորմալինու մատ-

ները աչքերին չօսել և մատները թրջելուց խուսափել. ֆորմալինով սրվակի բերանը միշտ փակած պահել։

Կենդանուն մինչև ֆորմալինի կամ սպիրտի մեջ գցելն, իհարկե, հարկավոր ե նախ յեթերով կամ քլորոֆորմով սատկեցնել։ Սպիրտային պրեպարատների համար ծախում են տարբեր չափերի յերկար, գլանաձև հատուկ անոթներ. ոգտագործել կարելի յե նաև այլ տեսակի լախաբերան անոթներն ու սրվակները, մանավանդ մուրաբայի բարակ ու յերկար բանկաները (տես բարտ 3. նկ. 3c)։ Նախքան կենդանուն անոթների մեջ տեղափորելը, պիտի սատկեցրած կենդանիներին լավ լվանալուց հետո կոճի սպիրտակ թելով կապել բարակ, նեղ ու յերկար (մինչև անոթի խցանը հասնող) ապակու վրա։ իհարկե, այդպիսի ապակե թիթեղներ պիտի պատրաստել նախորոք, հարմարեցնելով ունեցած բանկաներին։ Ուրեմն թելով կենդանուն յերկու կողմերից կապում եք ապակուն ալսպես. որինակ, յենթադրենք, թե կենդանին մողես ե. թելն անց եք կացնում կամ թաթերի վրայով և կամ թելած ասեղը մարմնի միջովն անցկացնելով, ապակու յետեկի մասում թելի ծայրերն իրար եք կապում (բարտ. 3, նկ. 3b)։ Այդպես անել, յեթե գործ ունեք սողունների, — մողեսի, կամ յերկենցաղների — գորտի հետ, և առնասարակ մեծ կենդանիների հետ։ Յեթե միջատներ եք պահելու, այդ գեղքում պիտի անեք այսպես. — նախապես չոր ապակու վրա կպցնել մի քանի տեղ խցանի կտորներ և ապասրանց վրա՝ միջատներին, յերբ լավ չորացած կլինեն, այնուհետև ապակին խորասուղել, սպիրտի մեջ։ Յենթագրենք, ուզում եք մեղվի զարգացման պրեպարատ պատրաստել։ Պիտի ձվիկները, ապա թրթուններն առանձին-առանձին տեղափորել փոքրիկ սրվակների, փորձանոթների<sup>1</sup> մեջ, մեջները սպիրտ լցնել, խցանով ամուր ծածկել ու կապել բանկայի մեջ դրվելիք պակուն։

<sup>1</sup> Ծալրահեղ դեղքում՝ յերկու կողմից խցանով ծածկված ապակակարձ ու լայն խողովակներում։


Պատրաստելուց հետո բանկան ծածկել խցանով. լավ կլինի, չեթե խցանի վրայով կենդանական թաղանթի (փուչիկի) կտոր փաթաթեք ու կապեք: (Թաղանթը նախորոք թրջել, լավ փափկացնել, ապա մառը քաշել բանկայի խցանի վրա ու ծալքերը մի ընթափել քաշելով, թելով պինդ կապել): Այս անհրաժեշտություն չե, կարելի յե բավականանալ և խցանով, բայց յեթե հասրավորություն կա, լավ կլինի վերն ասած ձեռվ խցանն ևս ծածկեք, վորովհետև հեղուկը գոլորշիացումից (գազացումից) ավելի լավ կպաշտպանվի:

Ի՞նչ պրեպարատներ պատրաստել. բերեմ մի քանի որինակներ:

1. **Տարբեր մողեմների հավաքածու:**
2. **Գորտեր** (մանավանդ՝ չմոռանալ - ծառագորտ, վոր հազվագյուտ ու սակավ ե պատահում և մատների ծալըին ողափամփշտիկներ ունի):
3. **Ոճեր:**
4. **Վորդեր:**
5. **Սարդեր:**
6. **Վորևե միջատի** (ճանձի, մեղվի, բզեզների) զարգացումը, յեթե լրիվ ունեք - նրա թրթուուը, հարսնյակը և ձվիկները: (Թիթեռների սպիրտային պրեպարատներ յերբեք չպատրաստեք):
7. **Չկներ:**
8. **Կենդանիների ներքին գործարանները պատկերացնող պրեպարատներ** (նախապես կենդանուն անդամահատել, բաց անել փորի վրայի մաշկը, մկանները, վոր ներքին գործարանները յերևան, լվանալ ու ապակու վրա կապել):
9. **Կենդանիների ուղեղները.** որինակ՝ ձկան, գորտի, մողեսի, աղավնու կամ հավի, ճագարի կամ նապաստակի:

Վերջին յերկու պրեպարատները պատրաստելու համար անհրաժեշտ ե անդամահատության գործիքներ ունենալ, գոնե հետևյալները. — դանակ (լանցետ), բոնիչ (պինցետ) և մկրատ: Ու-

ղեղ պատրաստելու համար նախ կենդանու գլուխը կտրել, վրայից հանել մաշկը, մկանները, ապա մկրատով զգուշությամբ կտրել գանգի գագաթի մասը: Գլուխը բռնել ձախ ձեռքով, իսկ աջով մկրատը: Գանգի գագաթը կտրել նախ յերկու կողքերից (գանգի յերկարությամբ), ապա լանցետով կտրված մասը զգուշությամբ բարձրացնել: Մի խոսքով գանգը կտրելու և ուղեղը հանելու ձեզ համար հարմար ձեռ դուք կգտնեք ինքներդ, ձեր վարժություններով:



Կենդանիների (միջամբերի) զարգացման կողեկցիա  
(Սպիրտալին պրեպարատ)

Նկարներ.—1. Մորեիի զարգացումը—ա—ձու, բ—թրթուր, գ—հասունացած մորեիս. 2. Յեղիբարպեղի զարգացումը. ա—ձու, բ—թրթուր, գ—հարսնյակ, դ—չափահաս բղեղներ. 3. Մայիսյան բղեղի զարգացումը. ա—ձու, բ—թրթուր, գ—հարսնյակ. դ—չափահաս արուն և եղբ. 4. Թռչունների թաթերի կոլեկցիա:

## 5. ԿՄԱԽՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Ի հարկե, մեծ կենդանիների կմախքներ պատրաստելը բիչ դժվար կլինի, իսկ փոքրերինը՝ համեմատաբար ավելի հեշտ ե։ Յեթե կմախք չկարողացաք պատրաստել՝ գանգը հն—դժվար չի լինի։ Յենթադրենք, ուզում եք աղավնու կմախք պատրաստել. ամենալավ, հեշտ (բայց յերկարատև) միջոցն ե—նրա դիակը թաղել հողի մեջ մի այնպիսի տեղ, ուր շատ մրջուններ կան։ Ժամանակի ընթացքում մրջունները դիակն այնպես կմաքրեն, վոր միայն վոսկրները կմնան։ Վորևէ փոքր կաթնասունի կմախքել այդ ձեռվ կարելի յէ ստանալ, — բայց շատ պիտի սպասել։ Ուրիշ միջոցներից մեկն ել դիակը ջրի մեջ յերկար պահելն ե։ Պահում են մի քանի որ, և դիակն սկսում ե փուլ։ ամեն որ փուած մասերը վրաչից նախորոք հանելով, ջուրը պիտի փոխել։ Այդ աշխատանքը պետք ե կատարվի բաց ողում, արեի տակ։ Չմոռանաք նախորոք կենդանու վրաչից հանել մաշկը. անդամահատելով՝ փորոտիքներն ել դուրս բերել։ Փուած մասերից ազատված վոսկրները մի քանի անգամ սապնաջրով պետք ե լվանալ. Ավելի կարճատև միջոցը—դիակի յեփելն ե։ Մաշկահան, փորոտիքներից մաքրած դիակը յեփում եք այնքան, վոր վոսկրի վրաչի մկանները հեշտությամբ պոկվեն ու մաքրվեն։ Շատ չեփել, թե չե վոսկրները միացնող ջերը նույնպես կլուծվեն ու վոսկրները կառանձնանան, վորից հետո նրանց հավաքելը դժվար կլինի։ Յեթե կենդանին փոքր ե, յերկար յեփելուց նրա վոսկորն ել փչանում ե։ Յեփելիս դիակը ժամանակ առ ժամանակ հանում եք և հեշտ պոկվող մասերը մաքրում։ Բան ե, յեթե վոսկրները բաժանվեցին ու առանձնացան, պիտի հավաքել և յուրաքանչյուրն իր տեղում միմանց կպցնել—գումիաբիթիկով, սինդիդիկոնով, կամ մի ուրիշ կպցնող նյութով։ Գանգի միջից ուղեղը փոքրիկ ձողիկով լավ մաքրել։ Առանձնացած վոսկրներն իրար կարելի յե կպցնել նաև յերկաթե բարակ լարով։ Յեթե միայն վոսկրներն ուրիշ միջոցով իրար չեն կպչում։ Այժմ մնում ե

վոսկրների դասավորելը։ Ամբողջ վողնաշարի միջով անցկացնել յերկաթե լար, առջևից նրա ծայրը մտցնել գանգի մեջ (ծոծրակի անցքով), ապա դադաթի վոսկրը զդուշ ծակել և յերկաթի լարը միջից դուրս բերելով՝ ծռել վոսկրի վրա։ Լարի մյուս ծայրը ծռել գավակոսկրի մոտ կամ մինչեւ պոչի ծայրը հասցնել (այս գեպքում պոչի վողների համար կծառայի վորպես հենարան)։ Առջևի և յետեկի վոտքերը կմախքին միացնել նույնպես լարով։ Վոտքերը բնական դիրքով պահելու համար ամրացնում եք լարին։ լարն անց եք կացնում վոսկըրների միջով կամ ել—կողքից։ կողքից անցկացնելու դեպքում ելի մի քանի տեղ պիտի անցկացնել վոսկրի միջով։ Ինչ խոսք, վոր կմախք պատրաստելը հեշտ աշխատանք չե, բայց բավական ե սկզբներում փոքր կենդանիների վրա մի քանի փորձեր կատարել։ թող կմախքը վատ պատրաստված լինի ու վոսկըրներն իրար լավ միացած չլինեն։ մի քանի անգամ պատրաստելով, այնպես կվարժվեք, վոր ձեր անհատական, ինքնուրույն ուժերով կմախքներ պատրաստերու կատարելագործված ձեւերը կդանեք։ Սովորաբար թանգարաններում ձեր տեսած կմախքներն սպիտակ են լինում։ Դա նրանից ե, վոր վոսկըները հատուկ նյութերի մեջ են պահում, վորից և նրանք հետզհետեսպիտակում են։ Այդ բարդ աշխատանք ե, կարիք ել չկա սկզբում սպիտակ վոսկըներ ունենալ, թող կմախքը լավ լինի, այնուհետև կկարդաք հատուկ գրքեր և կսովորեք, թե վոսկըրներն ինչպես սպիտակացնել։ Որինակ. միջոցներից մեկն ե ջրոքսիդի ու ջրի խառնուրդը՝ այսպիսի հարաբերությամբ—ջրոքսիդ—1 մաս, ջուր—10 մաս. վոսկըներն այդ խառնուրդի մեջ պահում են 5—6 ժամ։ Նատրիում—ջրոքսիդի հետ զդուշ վարվել, առարկաների, շորերի վրա չկաթեցնել։

Ամենից լավն ե, նախ կմախք պատրաստելը սովորեք, բայց սկզբում այդ ել կարող ե դժվար լինել. կենդանիների գանգեր հու անպատճառ պիտի պատրաստեք. սա թեթև աշխատանք ե։ Կենդանու մաշկահան գլուխը կոնսերվի բանկալում ջրով

լավ կեփեք. ժամանակ առ ժամանակ կհանեք և մսից լավ կմաքրեք և վերջն ել ուղեղը կհանեք։ Շատ չեփեք, վոր ջերն ու կրծկային մասերը չլուծվեն. յեթե ծնոտն ու ատամները դանգից առանձնացան, կպցրեք։

### III. ՆՅՈՒԹԵՐ ԳՈՐԾՆԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Բուսաբանական յեվ կենդարաբանական կոլեկցիաներ կազմելու համար ինչ և հարկավոր

1. Եքսկուրսիոն պարկ.
2. Գլանակի տարրեր չափի տուփեր.
3. Բանկաներ (լայնաբերան).
4. Հեղձարաններ (մեղոնող անոթներ. մօրիլկա)-
5. Թեռուղղիչ (расправилка)-
6. Քնդասեղներ—տարրեր չափի և հաստության.
7. Ապակեծածկ տուփեր միջատների համար.
8. Ստվարաթուղթ.
9. Սովորական սպիտակ, գունավոր և լրագրի թուղթ.
10. Քամիչ թուղթ.
11. Բոնիչ (պինցետ).
12. Դանակ (լանցետ).
13. Մկրատ.
14. Քանոն.
15. Մատիտ.
16. Ռետին.
17. Ուլա, ալյուր, սոսինձ կամ կպցնող ուրիշ նյութ (գումիարաբիկում-արարական խեժ).
18. Բամբակ.
19. Մարմաշ (կիսեյ), կուկնկոր.
20. Յերկաթե լար.
21. Փայտի ձողեր ցանցի համար.
22. Ապակի (լուսանկարչական անպետք նեղատի վների):
23. Բուսաբանական թիակ (բրիչ).
24. Ֆիննական դանակ (կամ ուրիշ նման դանակ).
25. Ռումենիլերի մամուլ (ցանց).
26. Ալմադ.

27. Հուշտեար.
28. Սպիրտ.
29. Ֆորմալին.
30. Յեթեր կամ քլորոֆորմ.
31. Կալիում հիդրոքսիդ:

#### IV. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Никифоров.—Как сушить растения для гербариев и др. коллекций.

Шнитников.—Как собирать зоологические коллекции.

Лавров Е.—Школьные биологические экскурсии.

Молозев.—Школьные экскурсии в лес.

Библиотека натуралиста, изд. «В мастерской природы».

Порецкий.—Собирание растений и составление гербария.

Полович С. А.—Простейшие работы по изготовлению коллекций в школе и дома.

Программы и наставления для наблюдений и собирания коллекций по Естественной Истории. (*մենամանրանին և լավ գրքը գեղագիրի համար*).

Н. Дергунов.—Охрана и привлечение птиц. Изд. Работн. Просвещения.

Э. Сердюкова и А. Кожевников.—Школьное цветоводство.

Вучетич.—Борьба с вредителями плодового сада.

Пантелеев.—Справочник по борьбе с вредителями и болезнями зерновых культур (*խմբակի գեղագիրի համար*).

#### Բայցերն ու կենդանիները բնաւող գրքեր

1. Ростовцев.—Определитель растений.
  2. Игнатьев.—Весенняя флора.
  3. Маевский.—Весенняя флора.
  4.     »         Осенняя флора.
  5.     »         Ключ к определению древесных растений
- п о листве.

6. Шлихтедаль и Вюнш.—Определитель насекомых.
7. Якобсон.—Определитель жуков.
8. Никольский.—Пресмыкающиеся и земноводные Кавказа.

#### Թանգարժեք գրքեր ու աշխաներ

Брем.—Жизнь животных.

Никольский.—Гады и рыбы.

Якобсон.—Жуки Европы.

Шарп.—Насекомые.

Барециус.—Бабочки Европы.

Шнейер и Нейнцич.—Жуки Европы.

Мензбир.—Птицы России.

Надсон.—Альбом съедобных и ядовитых грибов.

Монтеэрде.—Ботанический атлас.



## ՑԱՆԿ

Հեղինակից	3
-----------	---

## I. Կազմակերպչական մաս.

1. Խնչպես կազմակերպել գավառագիտական բնագիտական դպրոցական խմբակ	5
2. Աշխատանքի բնույթը	11
3. Արդյունաբերական հետախուզություններ	19
4. Ընդհանուր աշխատանքներ	20
5. Կամպանիաներ	23
6. Պատանի բնասերները և կոլտնտեսությունները	24
7. Կենդանի աշխարհ	25

## II. Գործնական մաս.

I. Բուսաբանական կոլեկցիաներ	30
II. Կենդանաբանական կոլեկցիաներ	52
III. Ելութեր գործնականի համար	81
IV. Գրականություն	82

ՀԱՅՈՒՍ ՎԱՐԴԱ ԽԱՅԱՏԻ ԱՎԱՐԱՐՈՒՄ
----------------------------------

ՀՀ Ազգային գրադարան



NL0243733

ԳՐԱՆՑՈՒՅՑ

510-

Группа юных  
любителей природы